

Հայկական գիտահետազոտական հանդույց Armenian Research & Academic Repository



Առևտ աշխատանքն արտանագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասուրյան 3.0» արտանագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենը և տարրելն եղուրը ցանկացած ձևաչափով կամ եղիչով
ձեռփոխել կամ օգտագործել առևտ եղուրը ստեղծելու համար եռը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

551

Ա. Խ. Հ. Ս.

Հ. Ս. Խ. Հ.

ՊՐՈՒՍԻԱՆ ԲՈԼՈՂ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՄԻԱՅՆԻ

63024
0486

Ա. ԵՆՎԱԼԴ

—♦♦—

ՀՐԱՅԱՆԱ-ՀՐԱԶԴԱՅԻՆ

— = Գ Ո Ր Ծ = —




Փոխազեց՝ Գ. ԿՈՒՐՈՎՅԱՆ



ՀՐԱՅԱՆԱ-ՀՐԱԶԴԱՅԻՆ

Հայկական Խմբագրական—Հրատարակական կոլլեցիայի, Կ. Կ. Ռանտէկի Շագմա-Հեղափոխական

Խոշորգիր հից
ԵՐԵՎԱՆ, 1924 թ.



Ա. Խ. Հ. Մ.


Հ. Ս. Խ. Հ.

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈՒԺ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅԵՑ

Ա. ԵՆՎԱԼԴ

623.555

—♦♦—



ՀՐԱՑԱՆԱ-ՀՐԱՉԳԱՅԻՆ

Գ Ո Ւ Ծ

15-330
A 4492

Փոխազրեց՝ Գ. ԿՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅՈ ԴԵՏՈՒՄ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴՐԱՄԱՐԱՆ № 2
ԴՐԱՄԱԿԱՐԱՆ

ՀՐԱՑԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկական Խմբագրական—Հրատարակչական կոլե-
գիայի, և. և. Շահակի Ռազմա-Հեղափոխական

Խորհրդին կից

ԵՐԵՎԱՆ, 1924 թ.

Տպագրական Տրեստի Հ-րդ տպարան Յերևան

Տիրամ 1200. Պատվեր № 2575.

ՑԱՆԿ

Ել

| | |
|------------------------------------|----|
| Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. | 5 |
| ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ | 8 |
| ՆԵՐՍ. ՄՈՒԹՈՅՑՈՒՆ | 10 |
| Հրացանն այլ տեսակի զենքերի շարժում | 10 |

ՄԸՍ I.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՀԱՄԱՐ

| | |
|--|----|
| Հրացանաձգի մարտական պարտականու- թյունները | 16 |
| Գնդակի բռիչի մասին | 18 |
| Հետազիծ (տրանկոորիա) | 18 |
| Գնդակների խոտորումը | 25 |
| ա. Զենքից կախված պատճառները | 25 |
| բ. Ցեղանակից կախված պատճառները | 25 |
| գ. Հրացանաձգից կախված պատճառները | 28 |
| դ. Գնդակների ցրումը | 29 |

ԱՆԳԱՏԱԿԱՆ, ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱԶԴՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

| | |
|---|----|
| Ընդհանուր կանոններ | 35 |
| Հրաձգության առանձնահատկություններ . | 38 |
| Հրաձգության առանձնահատկությունները զիսեր ժամանակ | 42 |
| Փամփութեանի բանեցնելը յեվ լրացումը . | 43 |

ՄԱՍ II.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՄԿԱՁՄԻ ՀԱՄԱՐ

| | |
|--|-----------|
| Նախական գործումներ | 45 |
| Հրացանային խմբական կրակի տեսական հիմունքները | 46 |
| Խմբական կրակը վարելու տեխնիկան . | 52 |
| Ընդհանուր ցուցումներ | 52 |
| Մարտադաշտը դիտելը | 53 |
| Նշանի ընտրությունը | 55 |
| Հրացանածիզներին նշաններ ցույց տալը | 58 |
| Նշանոցի բարձրության ընտրությունը . | 59 |
| Նշանառության համար կետերի (ընազդե- րի) ընտրությունը | 61 |
| Կրակի տեսակի ընտրությունը | 64 |
| Կրակի տեղափոխությունը, դադարեցնելը յիվ ընդհատումը | 66 |
| Գիշերային հրաձգություն | 67 |
| Փամփուշաների լրացումը մարտում . | 67 |
| ԲԱՌԱՑՈՒՅԱԿ | 69 |

ԱՊԱՀԱԲԱՆ

Հրատարակելով ներկա ռազմական առաջին գրքույկը, Կոլեգիան ավելորդ չի համարում մի քանի խոսք ասել իր ապագա աշխատանքների յեվ գործի նշանակության մասին:

Կ. Կ. Բանակի Ռազմա-հեղափոխական Խորհուրդը, կենտրոնի հրահանգով, իրեն կից կազմակերպելով, Անդրկովկասյան մասշտաբով, յերեք հանրապետությունների կոլեգիաներ, վորոնց թվում յեվ Հայկական Խմբագրական-հրատարակչական կոլեգիա, տվել ե նրանց հասուեկ իրավունքներ յեվ ինքնուրույն գործունեյության իրավասություն: Կոլեգիայի անմիջական յեվ ուղղակի պարտականությունն ե թարգմանել զորական կարեւոր ու առաջնակարգ նշանակություն ունեցող գրքեր, մշակել հայերեն տերմինոգիա յեվ իր սանկցիան տալ զորամասերի յեվ զորհիմնարկների համար հայերեն լույս տեսած յեվ լույս տեսնվելիք հրատարակությունների համար:

Ս. Խ. Հանրապետությունների Միության Ռազմա-հեղափոխական Խորհուրդը, նշտորեն գիտակցել ե, վորհորդային Միության բազմամիլիոն յեվ բազմաթեզու պրոլետարների, մասնավորապես յեվ հայ պրոլետար մասսայի, կարմիր ռազմիկների պարտական դաստիարակության, հեղափոխականորեն կազմակերպելու յեվ գիտակից ու կուռ բանակ պատրաստելու

մեծ հաջողությունը ռազմական գործը մայրենի լեզվով ուսուցանելու մեջ ե:

Մենք, հայերս, յերկար դարեր շարունակ ինքնուրույն պետական կյանք չենք սպառել յեվ չենք ունեցել մեր սեփական կազմակերպված գորքը: Պատմության մեջ յերբեմնակի գոյություն ունեցած հայկական գորքը ժամանակավոր կյանք ե ունեցել, կազմվել ե ոտարների ազդեցության տակ յեվ կրել ե պարտիզանական բնույթ:

Այս ե պատճառը, վոր հայ գրականությունը չի մշակել յուրահատուկ ռազմական լեզու յեվ տերմինուգիա, իսկ մեզ հասած հատ ու կտոր ռազմական բառերն ու տերմինները շատ դեպքերում իրանց իմաստով չեն համապատասխանում ներկա տեխնիկապես զարգացած գորական նորույթների նշանակությանը: Հայ աշխատավոր մասսան—բանվորներն ու գյուղացիները—միայն այսոր, իրեն գոյության պատմության ամբողջ ընթացքում, ապրում ե միորինակ, ազատ, ինքնուրույն պետական կյանք: Խմբագր.-Հրատ. Կոլեգիան զգում ե, վոր իր վրա պարտք ե դրված մի նոր գորական գրականություն ստեղծելու դժվարին գործը: Սակայն անցյալում ռազմական գրքերի ոռուերենից հայերեն կատարած թարգմանությունների փորձերը ցույց են տվել, վոր մեր լեզուն, իր ճկունությամբ յեվ ժողովրդական բարբառների հարստությամբ, հնարավորություն պիտի տա հաղթահարելու ռազմական լեզու ու տերմինուգիա մշակելու դժվարությանը:

Հայ բանակայինն, իրբեվ հեղափոխական ռազմիկ, դաստիարակվելով յեվ սովորելով մայրենի լեզվով, պիտի գիտակցորեն վերաբերվի դեպի իրեն զինվորական պարտքը հանդեպ Ս. Խ. Հ. Միության

ու հայ պլուետարիատի, յեվ իբրեւ հմուտ մարտիկ,
պիտի դուրս գա զենքը ծեռքին պաշտպանելու Հոկ-
տեմբերյան հեղափոխության նվաճումները բուրժու-
ագիայի դեմ:

Ահա այսպիսի հավատով ե, վոր մենք դիմում
ենք մեր գրական-հրատարակչական աշխատանքնե-
րին, հուսալով, վոր մեր ավագ յեվ կրտսեր գիտակ
ընկերներն իրանց վերաբերմունքով ու խորհուրդնե-
րով ընդառաջ կզնան մեզ, մեր գործն ազողությամբ
պսակելու համար:

Հայկ. Խմբագր. - Հրատ. Կոլեգիա



ՅԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ

Հեղինակը իր „Ружейно-Стрелковое дело“⁴⁴ գրքույցի առաջաբանի սկզբում համեմատության մեջ դնելով հրացանի և գնդացիքների կրակը, վորոշակի կերպով ցույց է տալիս գնդացիքների դործածության ժամանակը և ձևերը։ Առաջաբանի մյուս հիշված ցուցումները ճիշտ են, տեղին և պարզ, նամանավանդ հոդված 12-րդը, վորոշակ ասում է. «Մեքենայագրած վաշտում չի կարելի մոռանալ հրացանը, վորը միակն է, վոր յերբեք չի մերժել շարունակելու իր կրակը մարտի վերջին մրցման ըովեներին»։ Տեղեկությունները, ինչպես կարմիր բանակայինի, նույնպես և գնդակի թոփչքի մասին, բացատրված են մանրամասնորեն և լրիվ։ Այս մասը միանգամայն բավարար կարելի յէ համարել։ Մենագարկ հրածդության մասին խոսելիս, հեղինակը տալիս է առանձին հրացանաձգի պարտավորությունների լրիվ պատկերը և նրա հրածդության արագությունը (տես հոդված 40)։ Գալով դրքի յերկրորդ մասին, վորը վերաբերում է կրտսեր հրամկագմի պարտականություններին,

պետք ե վողջունել ամբողջովին։ Այստեղ հեղինակը տալիս ե այն անհրաժեշտ պարտականությունները և տեղեկությունները, վորոնք հատուկ են հրամկազմին՝ կրակը կառավարելու դեպքում։ Ինչ վերաբերում ե «առանձին տեսակի հրածգության», պետք ե ասել, վոր դա գործնական կյանքում դրական հետեւանքների չի հասցընում, ուստի հեղինակի համաձայնությամբ գրքի այդ մասը (§§ 103—115) հանված է։ Վերջացնելով խոսքս պետք ե ասեմ, վոր ընկ. Ենվարդի այս փոքրիկ աշխատանքը ներկայացնում ե իրանից մի խոշոր պլյուս մեր հրածգային գործում և ամենալավ ոժանդակ աղբյուրն ե այդ գործը ուսումնասիրելու համար։

Փոխադրող՝ Գ. ԿՈՒՐԱՆՅԱՆ

15 մայիսի 1924թ.

ՅԵՐԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՃՐԱՑԱՆ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ԶԵՆՔԵՐԻ ՇԱՐՖՈՒՄ

1. Հարձակողական կամ պաշտպանողական մարտում զորամասերն իրանց հանձնարարված մարտական խնդիրն աջողությամբ լուծելու համար, դիմում են կրակի մրցման։ Հարձակվողն իր կրակի միջոցով աշխատում է ճանապարհ բանալ գեղի հակառակորդը, վորքան կարելի յե, իր կրակով, անվասս դարձնել թշնամու կրակը, ապահովել իրեն ավելորդ կորուստներից և վաղորոք պատրաստել աջողություն թշնամուն վճռական հարված հասցնելու համար։ Պաշտպանվողը ձգտում է իր կրակով քայլքայել հակառակորդի ուժը, կասեցնել և կանգնեցնել նրա հարվածը, յետ շպրտելով նրան իր ուժեղ հականարվածով։

2. Քաջ և ուժեղ հակառակորդի հետ կրակով մրցելու ժամանակ, կրակի զերակլությունն

իր ձեռքը զցելու համար՝ անհրաժեշտ ե գործադրել ձեռքի տակ յեղած կրակի բոլոր միջոցները։ Սակայն այդ միջոցների յուրաքանչյուր տեսակը պետք ե գործադրել իր ժամանակին համաձայն նրա հատկությունների և յերբ այդ տեղին ե ու ձեռնտու։

3. Հրետանու կրակից հետո յերկրորդ տեղն ե բոնում ծանր զնդացիրների կրակը, վորն ընդունակ ե $4-4^{1/2}$ հազար քայլի վրա եյական հարված հասցնելու հակառակորդին, յերբ նրանք գործում են հանկարծակի թևային և շեղ կրակով։ Միջին և մոտիկ հեռավորության վրա զընդացիրները գործում են կործանիչ կերպով, նամանավանդ թևային և շեղ կրակի ժամանակ։ Ծանր զնդացիրներով անվտանգ կարելի յե կրակել գլխի վրայով և միջանցներով։ Նրանք կարող են գործել ծածկված դիրքերում, հարվածել ծածկված նշանները (թշնամուն և զնդացիրներին) և նույնիսկ թշնամուց մաքրել նրա գրաված մարտավայրը։ Գնդացիրների կրակն աջողությամբ կարելի յե տեղափոխել թշնամու խորքը և թիկունքը։ Մի խոսքով ծանր զնդացիրները կազմում են հրաձգական գործի նեցուկն ու հիմքը։

4. Այս զնդացիրների թերություններն են՝ իրանց մեծությունը, դժվարաշարժությունը և թիկունքից կախում ունենալը (փամփուշտներ մատակարարելու դժվարությունը)։ Այս թերու-

թյունները և նրանց ականջ ծակող տիպիկ կրակի ձայնը հնարավորություն են տալիս թշնամու հրետանու դիտողներին հեշտությամբ գտնել և կրակ բանալ նրանց վրա։ Այս հանդամանքները ստիպում են զգուշությամբ ոգտագործել նրանց, գործադրելով միմիայն աչքի ընկնող նշանների վրա, վորոնք չեն կարող կարճ ժամանակում անվնաս դառնալ մյուս կրակի միջոցներով։

5. Ուրեմն, մենք տեսնում ենք, վոր թշնամուն մոտենալու ժամանակ՝ 1400—1200 քայլից հրամարտի ծանրությունը հետպհետե անցնում է թեթեվ զնդացիրներին։ Նրանք, շնորհիվ իրանց թեթևության, շարժունության և փոքրության ընդունակ են զորաշարժեր կատարել հրաձգային խմբակների հետ միասին (թեթև զնդացիրները, հարձակման ժամանակ, գլխավորապես լինում են հրաձգային խմբակներից առաջ և թեթևում), լուծելով այնպիսի կրակի խնդիրներ, վորոնք հասուկ են միմիայն զնդացիրներին։

6. 1000—800 քայլից կրակի ծանրությունն անցնում է ավտոմատներին, վորոնք շնորհիվ իրանց թեթևության, համարյա թե թեթև զնդացիրներին հավասար աջողությամբ կարող են զործել մոտիկ մարտական դոտիում։ Ավտոմատների կրակն ուժեղացնելու համար ցանկալի յե ավելացնել 2—3 լեռտիլ հրացանածիզներ։

7. Մոտավորապես այս մարտական գոտին թաքնված թշնամուն հարվածելու, նրա շինած պատճենները և խոչընդուռները քանդելու, և բարոյական ցնցում առաջ բերելու համար՝ կարելի յէ գործածել նոնանետեր:

8. Ակսած 600—500 քայլից հրամարտը հետզհետե համնում ե իր ամենաբարձր դադաթնակետին: Գնդացիրներին և ավտոմատներին ոգնության են գալիս նաև բոլոր հրացանածիզները: Նրանց մասսայական դիպուկ, տեղին ուժամահակին բացած կրակն ընդունակ ե առանց սվինտմարտի վերջացնելու մարտը՝ թշնամու ֆիզիկական և բարոյական ուժերը ջլատելով:

9. Չեռքի նոնակիները գնդակի հետ՝ միասին գործում են բանալով ճանապարհ սրազենի համար: Բոնամարտում սվինի և գնդակի հետ միասին գործում են նաև ատրճանակը և մարտիկների մոտ յեղած գործիքները (թիակներ, կացին և այլն):

10. Գրավված վայրն ամրացնելու, թշնամուն հետապնդելու և նույնիսկ նրա հակագրոնը յետ շպրտելու համար՝ գործադրության մեջ են դրվում զենքի բոլոր տեսակները, նամանավանդանը և թեթև գնդացիրները, վորոնք առանձնապես կարելոր զեր են խաղում այդ վայրկյանին:

11. Այս բոլոր ասածներից յեղբակացնում ենք, զոր հրացանածիզները սկսուք ե զործեն

թշնամոց մոտիկ հեռավորության վրա: (600—500 քայլի վրա): Մինչև այդ տեղը հասնելը նրանք հարձակվում են հարմարվելով տեղին, հսարավորություն տալով գնդացիրներին և ավտոմատներին հրամարած վարելու: Իսկ պաշտպանողական կովում հրացանաձիգները պարտավոր են ջանքով ուժեր և միջոցներ պատրաստել թշնամուն հակագրոհով վճռական հարված հասցընելու համար: Այդուն ել պետք ե լինի, յերբ գործում ե բավարար թվով ուժեղ ավտոմատնենքը: Սակայն միշտ այդ զենքը չի կարող կանոնավոր գործել, ուստի պետք ե աչքի առաջ ունենալ այս խելացի նշանաբանը: «Թնդանոթի, զնդացիրների յեվ ավտոմատի վրա հոյս դիր, բայց դու անփոյթ կամ սկարտազանց մի գոնվիր:

12. Հրացանը փորձված և քաջ մարտիկի ձեռքում ամենակարող ուժն է: Նա չի դավաճանիլ և պետք կզա ամենայն ժամ, թե հեռվում, թե մոտիկում և թե զրոհի ժամանակ:

13. Հրացանի կրակը կովում այնքան նշանակություն ունի, վորքան մեծ և նրա կրակի գործոնությունը (գործոն լինելը). այսինքն, վորքան ընդունակ ե նրա կրակը կարճ ժամանակում թշնամուն ծանր հարվածներ տալու: Զինասող կրակը միայն հետաձգում ե հարձակումը, անտեղի ծախսում ե փամփուշները, զինվորներին ուժասապառ ե անում, վոչնչաց-

նում ե նրանց մեջ հավատը դեպի իրանց զենքը, և փոխանակ թշնամուն սարսափեցնելու քաջալերում ե նրան:

14. Վորպեսզի կրակը գործոն լինի, անհրաժեշտ ե, վոր հրացանաձիգները մտածված, դիպուկ, տոկուն, ճարպիկ ու զգուշ կրակ բան, իսկ կրտսեր պետերը կարողանան խելացի և հմուտ կերպով միացյալ կրակը կառավարել: Մեծ նշանակություն ունի նաև ձեռքի տակ յեղած զենքի և փամփուշտների սարքին դրությունը և պահպանումը:

ՄԱՍ I.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱ- ՆԱԿԱՑԻՆԻ ՀԱՄԱՐ

ՃՐԱՑԱՆԱԳԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Ինչպես ընդհանուր որենք, հրացանաձիգը հրամարտում պետք է գործե իր ողակում՝ ողուկապետի անմիջական զեկավարությամբ, ավտոմատի կամ թեթև գնդացրի հետ միասին: Կովի ծանր պարագաները անհնարին են դարձնում պետերին լրիվ և հասկանալի հրամաններ տալ. ուստի յուրաքանչյուր հրացանաձիգ սկարտավոր է մի ակնարկից արագ հասկանալ և ըմբռնել իր պետի ցուցումներն ու հրամանները. այդ հրամանները ակամայից կարող են լինել կարճ, կցկտուր և վոչ պարզ:

16. Յերբ պետերի կողմից կրակի կառավարելը անհնարին է դառնում, նամանավանդ թշնամուն մոտենալիս, այդ ժամանակ՝ հրացանաձիգը սկարտավոր եւ ինքնուրույն կրակել: Նա

պետք է հասկանա, վոր հաղթության գրավականը
ձեռք է բերվում ընկերների հետ սերտ աշխա-
տակցությամբ և փոխադարձ ոգնությամբ թե
կրակի և թե անձնական զոհողության վերա-
բերմամբ:

A 4492

17. Լավ հրացանաձիգ լինելու համար ան-
հրաժեշտ է. ա) Իմանալ մանրամասնորեն իր
հրացանի բոլոր նրբությունների մանրամասնու-
թյունները, նրա խփելը (ընավորությունը), միշտ
սիրել դենքը, խնամել և սարքին պահել բոլոր
պայմաններում, հասկանալ թե ինչպես և թոշում
գնդակը, ինչպիսի սխալներ են առաջանում և
թե ինչպես պետք է գնդակը դիպուկ դարձնելու
համար, այդ սխալները ուղղել. բ) Կարողանալ
արագ պատրաստվել կրակ բանալուն, վաղորոք
հարմարվել տեղին—քողարկվել, հենարան պատ-
րաստել հրացանի համար. արագ զանել պետի
ցույց տված նշանը, հրացանը լցնել և նշանոց
դնել, ուղղելով հրացանը նշանակետին. դ) Կա-
րողանալ կրակ վարել, գնդակը իր նպաստակին
ծառայեցնելու համար, կարիք յեղած դեպքում,
դանադաղ և յերկաբատե, և, յեթե հարկավոր է,
կենդանի արագ, սակայն միշտ դիպուկ. ուղիղ
նշանառությամբ և սահուն կերպով, առանց
ցնցվելու իջեցնել հրահանը. դիտել յուրաքան-
չյուր բաց թողած գնդակը, թիւ գրաեղ և ընկ-
նում, և գլխի ընկներ թիւ գնդակը իր նպաստակին

ծառայեցնելու համար ինչ ուղղումներ ե հարկավոր։ Բացի դրանից ինքնուրույն հրամարտ վարելու դեպքում պետք ե՝ դ) Ըմբռնել թե յերբ և ինչպես պետք ե գործադրել իր կրակը, յերբ և ինչպիսի նշանների վրա կրակել, յերբ վորել դանդաղ կամ արագ (հաճախ) կրակ, յերբ կանգնեցնել և դադարեցնել կրակը. յե) Կարողանալ առանց կողմնակի ոգնությամբ բավականին ճշտությամբ, աչքաչափով վորոշել մինչև նշանը յեղած տարածությունը և դնել ճիշտ նշանոց։

18. Բոլոր դեպքերում հրացանաձիգը պետք է աշխատի խիստ պահպանել կրակի կարգապահությունը, այսինքն կրակել հանգիստ և գիտակցորեն, հետևել իրան և նշանին, հաշվով բանեցնել փամփուշտները և հոգ տանել փամփուշտների քանակը լրացնելու մասին։

Ընդհանուր կանոն է. «Սպանելու կամ վերավորելու համար ըավական և կազմնել միայն մի զնդակ, արձակեցե՛ք հենց այդ զնդակը»։

ԳՆԴԱԿԻ ԹՌԻՉՔԻ ՄԱՍԻՆ

Հետազիծ (տրանելուրիա)


19. Այն կետը, դեպի վորր ուղղվում է հրացանի հատիկը, կոչվում է նշանակետ։ Այդ կետը

լինում ե նշանի վրա և կարող ե պատահել, վոր
լինի նշանից դուրս:

20. Այն գիծը, վորը անցնում ե հրացանա-
ձըգի աչքից նշանոցի դիտոցի միջով և հատիկի
գագաթից դեպի նշանակետը, կոչվում ե նշանա-
զիծ:

21. Յերբ հրացանը ուղղում ենք վորեե նշա-
նի և նայում փողի միջից, տեսնում ենք, վոր
հրացանի փողը բարձրացնում ենք, փողը ավելի և ավե-
րարձրանում ե, իսկ նշանակետը ցածրանում ե:
Այդպես ել պետք ելինի, վորովիետե գնդակը սկսե-
լով թռչել փողի ուղղությամբ, շնորհիվ իր ծանրու-
թյան և ողի դիմագրության ստիպված ե լինում
հետզհետե ցածրանալ նշանոցին համեմատ հեռավո-
րության վրա և ընկնում ե հենց նշանակետում:
Այդպիսով գնդակը թռչելով փողաբերանից կազ-
մում ե մի կոր գիծ, վոր կոչվում ե զնողակի
թռիչքի գիծ կամ հետազիծ: Հետազծի մեջտեղը
ավելի բարձր ե լինում նշանագծից. վորքան նշա-
նոցը բարձրացնում ենք, այդ հետազծի կորու-
թյունը մեծանում ե, հետևապես գնդակը թռո-
չում ե ավելի հեռու: Այդ հետազծի մեջտեղի ամե-
նամեծ բարձրությունը նշանագծից տարբեր նշա-
նոցներով կրակելիս՝ տարբեր ե լինում. որինակ
յերբ կրակում ենք մշտական նշանոցով (2) հե-
տազծի ամենամեծ բարձրությունը լինում ե մո-


տավորապես $\frac{3}{4}$ վերշոկ, 4 նշանոցով—մոտավորապես $\frac{1}{4}$ արշին, 6 նշանոցով—10 վերշոկ, 8 նշանոցով—մոտ $1\frac{1}{2}$ արշին և վերջապես 10 նշանոցով—մոտ $2\frac{1}{2}$ արշին և այլն։ Այս թվերից յերեսում ե, վոռ զնդակի թոխչքի գիծը հետագիծը մինչև 600 քայլ այնքան ել նշանագլծից ավելի կոր չել լինում։ Տամարյա թե ողիղ զիծ և կազմում նրա հետ։ այս պատճառով ել նրացանի արձակյունը մինչև 600 քայլը կոչվում է ողիղ արձակյուն։ 600 քայլից հեռու տարածության վրա հետագծի բարձրությունը ավելի նկատելի յել լինում։ ուստի զնդակը գետնին իջնելիս թեք զիծ և կազմում ե ստացվում ե վոչ ուղիղ արձակյուն։



22. Այս հողամասը, վորի վրա նշանի տակին նշան բռնելիս, զնդակը անցնում է նշանի դիմուց վոչ բարձր, կոչվում է (այդ նշանի համար) հարվածելի տարածություն։ Վորքան յերկար լինի այդ տարածությունը, այնքան ձեռքնու յել նրացանաձղին, վորովհետեւ յեթե նա նշանոցը սխալ դնի, վոչ ավելի քան հարվածելի

տարածության յերկարությունը (նշանոցը փոքր
 լինի տարածության համեմատ), կարող ե հար-
 վածել նշանին առանց նշանոցը և նշանակեալ
 փոխելու։ Տարբերությունը այն կը լինի, վոր
 գնդակը կընկնի նշանի ներքել, մեջտեղը կամ
 դիմին, վորը բոլորովին արժեք չունի գործի հա-
 մար։ Պարզ ե, վոր հարվածելի տարածությունը
 մեծ կլինի այն ժամանակ, յերբ նշանը բարձր
 ե և յերբ գնդակի թոփչքի գծի կորությունը
 փոքր ե. այսինքն, գնդակը սողում ե ցածր, և
 ընդհակառակն, հարվածելի տարածությունը
 փոքր ե լինում, յերբ նշանը փոքր ե և գնդակի
 հետապիծը համեմատաբար մեծ է։ Գնդակը սլա-
 նում ե ցածր, չնչին կոր գծով, յերբ նշանոցը
 փոքր ե, այսինքն, նշանը հեռու չե հրացանա-
 ձրգից, և հրաձգությունը կատարվում է պառկած։
 Որինակ՝ զլիսաշափ նշանին կարելի յե նշան բըռ-
 նել նշանի տակին և աջող կերպով հարվածել 2
 նշանոցով, ամբողջ տարածության վրա մինչև 200
 քայլ, 4 նշանոցով—մինչև 400 քայլ, 6 նշանոցով
 միմիայն 500-ի և 600-ի միջի տարածությունը, 8
 նշանոցով-750 և 800-ի մեջյեղած տարածությունը
 և վերջապես 10 նշանոցով—970-ի և 1000
 մեջ յեղած տարածությունը և այն։ Կրծքաշափ
 նշանի համար նշանոցներ 2, 4 և 6 հարվածում
 են (պառկած կրակելիս) իրանց ամբողջ տարա-
 ծության վրա ըստ նշանոցի, 8 նշանոցը հարվա-


ծում ե 700-ի և 800-ի մեջ յեղած տարածությունը, 10 նշանոցը հարվածում ե 950-ի և 1000-ի մեջ յեղած տարածությունը։ Հասակաշափ նշանին (կանգնած կամ քայլող մարդուն) կարելի յե հարվածել 2—8 նշանոցներով ամբողջ տարածության վրա, իսկ 10 նշանոցով միայն 250 քայլ։ Վերջապես ձիավորին նշան բռնելով ձիու վոտերքի տակին, կարելի յե հարվածել 2, 4, 6, 8 և 10 նշանոցներով ամբողջ տարածության վրա։ Հարվածելի տարածությունը փոքրանում ե ավելի մեծ հեռավորության վրա, ուստի սխալ նշանոցով դժվար ե լինում նշանին կպցնել, հարկ ե լինում նշանակետը ընտրել նշանից բարձր կամ ցածր, բայց թե վորքան, ճիշտ չի կարելի վորոշել. ավելի նպատակահարմար ե նշանոցը փոխել։



23. Յերբ գնդակը կտրում է նշանոցի համեմատ վերցրած հեռավորության նշանագիծը, նաշարունակում ե իր թոփչքը յեթե նրան չի խանդարում գետինը, աստիճանաբար իջնելով նշանագը պըծից ավելի ցած։ Գնդակի այդ ցածրանալը այնքան ավելի յե կատարվում, վորքան գնդակի թոփչքի

գծի կորությունը մեծ է. այսինքն վորքան ավելի քարձր նշանոցով ե լինում հրաձգությունը։ Մշտական նշանոցով այդ ցածրանալը փողաբերանից 300 քայլի վրա հասնում ե մինչև $\frac{1}{4}$ արշին, 400 քայլի վրա—մինչև $\frac{1}{2}$ արշին, 500 քայլի վրա—մինչև 1 արշին, 600 քայլի վրա—մինչև $\frac{1}{2}$ արշին, 700 քայլի վրա—մինչև $\frac{2}{4}$ արշին և վերջապես 800 քայլի վրա—մինչև 3 արշին։ Հիմնվելով վերոհիշյալի վրա, մշտական նշանոցով միայն նշանակետը բարձրացնելով մինչև նշանի գլուխը, կարելի յե աջող հարվածել զլիաշափ նշանին (6 վերշոկ) մինչև 350 քայլ, կը ծքաշափ նշանին (10 վերշոկ) մինչև 450 քայլ, գոտկաշափ նշանին ($1\frac{1}{2}$ արշին) մինչև 550 քայլ և հատակաշափ նշանին ($2\frac{1}{4}$ արշին) մինչև 700 քայլ։ Զիավորին, բարձրացնելով նշանակետը մինչև ձիու գլուխը, կարելի յե հարվածել մինչև 800 քայլ։ Ավելի բարձր նշանոցներով կրակելիս գնդակի ցածրանալը կատարվում ե վոչ այնքան աստիճանաբար։ Այդպիսի նշանոցներով հարմար ե նշան-բռնել միշտ նշանի տակին։ Իսկ յեթե գնդակը չի հասնիլ նշանին կամ կանցնի նշանից դեսը, այդ դեպքում պետք ե բարձրացնել կամ ցածրացնել վոչ թե նշանակետը, ինչպես վերեվում հիշեցինք, այլ նշանոցը մի ամբողջ խազով բարձրացնել կամ ցածրանել։

Ծանոթություն. — Աշտական նշանոցով
կը ակելիս նշանակեալ բարձրացնում ենք
այն դեպքերում, յերբ նշանը շարժվում է և
ժամանակ չկա նշանոց գնելու. Հրացանա-
ծիզը պարտավոր է հնարավոր յեղած դեպ-
քում անմիջապես դնել նշանոց հեռավո-
րության համեմատ և կը ակել: Գ. Կ.



24. Գնդակը հաճախ իր թոփչքի ժամանակ
գետնին է կպչում և անդրադառնալով շարու-
նակում է իր թոփչքը:

Այդպիսի դեպքերում գնդակի իր նպատա-
կին հասնելը կասկածելի յե դառնում: Հրացա-
նածիզը դիտելով գնդակների գետնից անդրա-
դառնալը և նրանց ընկնելու աեղը՝ դիտակցորեն
ուղղում է իր արած սխալները:

ԳՆԴԱԿՆԵՐԻ ԽՈՏՈՐՈՒՄԸ

25. Գնդակը իր թոփչքը կատարելիս հաճախ խոտորում է ուղիղ դիպչելուց։ Դրա պատճառները բազմաթիվ են։ Հրացանաձիգը, վորը ցանկանում է հասնել դիպուկ կրակի, պետք է իմանաայդ պատճառները. հասկանա նրանց ազգեցությունը և կարողանա ըստ կարելույն դրանց առաջն առնել։

26. Խոտորման գլխավոր պատճառները սերտ կախված են զենքից, յեղանակից և հրացանաձգից։

Ա. Զենքից կախված պատճառները.

ա) Գնդակի ձախից դեպի աջ պըտըտվելու հետևանքով, վորը առաջ է գալիս փողի ակոսներից, գնդակը խոտորվում է դեպի աջ և այս կոչվում է շեղում։

Սակայն մինչև 1000 քայլը այդ շեղումը հասնում է վոչ ավելի քան $\frac{1}{4}$ արշինի, վորը գործնականում նշանակություն չունի. բ) Սվինը հազցրած հրացանով կրակելիս, սվինի ծանրության պատճառով հրացանի ծանրության կենտրոնը տեղափոխվում է դեպի աջ, այդ պատճառով գնդակը խոտորվում է դեպի ձախ։ Այդ խոտորման առաջն առնելու համար, հրացանի հատիկը միջին դրությունից համապատասխան

չափով (2 կետի չափ) տեղափոխված ե ձախ-
սրանով սվինի վնասակար ազդեցությունը վոչըն-
չանում ե:

Ուստի այդպիսի հրացանով առանց սվինի
կրակելիս պետք ե իմանալ, վոր գնդակը
կխոտորվի նշանակետից դեպի աջ. դ) Յեթե
հրացանի հատիկը տեղից շարժվել ե աջ կամ
ձախ, կամ ծոված ե մի կողքի վրա, գնդակը
կխոտորվի հակառակ կողմը: Յեթե հատիկը
գաղաթը վնասված ե և նրա բարձրությունը,
թեկուղ աննշան չափով, պակասել ե, գնդակը
կդիպչի նշանակետից բարձր:

դ) Մի կողքի վրա ծոված նշանոցի շրջանակը
խոտորում ե գնդակը դեպի ծուած կողմը. յե) Յեթե հրացանի փողը ծոված ե, գնդակը կխո-
տորվի դեպի նույն կողմը. զ) Յեթե փողաբե-
րանի կտրվածքի վրա կա ջարդվածք կամ հուպ
յեկած տեղ, գնդակը կխոտորվի ջարդվածքի հա-
կառակ կողմը. ե) Փողի առուցքը ժանգը, սվինի
շարժվելը, պոչի և հենարանի պտուտակների
թույլությունը, ողերի չափազանց ամուր կամ
թույլ դրությունը, փողանցքի մաշված լինելը,
ձգանի պինդ կամ թույլ լինելը, և այլ նման
թերությունները ցըսւմ են գնդակները զանա-
պան կողմեր:

Բ. Յեղանակից կախված պատճառները.

ա) Յուրաք, խոնավությունը և ուժեղ

հակընդդեմ քամին խանգարում են գնդակին շարունակելու իր թոփչքը և ստիպում են նրան ցածրանալ։ Տաքությունը և չորությունը, բարակ քամին և ուժեղ ուղեկից քամին հակառակ ազդեցություն են ունենում գնդակի թոփչքի վրա (գնդակը ավելի հեռու յէ թոշում)։ Սակայն մինչև 1000 քայլը այդ ազդեցությունները անըդգալի յեն և աննշան։

Բ) Կողքից վիչող քամին խոտորում ե գընդակը դեպի դիմացի կողմը։ Որինակ՝ միջակ և բավականի զգալի չափով ուժ ունեցող քամուց առաջացած խոտորումը հետեւյան ե։

| Հեռավորություն | 200 | 400 | 600 | 800 | 1000 | 1200 | Քայլ |
|----------------|-----|-----|-----|-----|------|------|------|
| Խոտորում | 2 | 5 | 10 | 20 | 35 | 55 | Քայլ |

Ուժեղ քամին տալիս ե խոտորում վերոհիշյալ թվերի կրկնապատիկը, իսկ թույլ—2 անգամ պակաս։

Ծանոթություն. Քամու ուժը կարելի յէ վորոշել հետեւյալ նշաններով. ուժեղ քամու ժամանակ շարժվում են ծառերի բները, թաշկինակը, որի մեջ ծայրից բռնած դեպքում, քամին աշխատում ե խլել։ Միջակ քամու ժամանակ ծառերի մեծ ճյուղերը շարժվում են, թաշկինակը շարժվում ե վոչ

ուժեղ։ Թույլ քամու ժամանակ ծառի
տերևներն են շարժվում, թաշկինակը թեթև
կերպով տարուրերվում է։

դ) Վառ արեգակը յերբեմն փայլեցնում է
իրան ուղղված հատիկի յերեսը և նշանոցի դի-
տոցը, վոր առաջացնում է ակամայից հատիկը
դեպի արեգակի հակառակ կողմը քաշելը. իսկ
այս յերեսութիւն պատճառով գնդակը խոտորվում
է դեպի նույն կողմը (յեթե արեգակը փայլեց-
նում է ձախ կողմից, գնդակները խոտորվում
են դեպի աջ և ընդհակառակն)։

Գ. Հրացանաձգից կախված սկառնառները.

ա) Հրացանաձիգը անուշադրությունից կամ
հեռավորությունը սխալ իմանալուց, սխալ նշա-
նոց է դնում. այդ դեպքում գնդակները նշանից
խոտորվում են դեպի բարձր կամ ցածր, և գըն-
դակը կարող է չհամնի նշանին կամ նշանից
դեռն անցնի. բ) Յեթե հրացանը ձեռքում վոլոր-
վում է աջ կամ ձախ, գնդակը խոտորվում է
դեպի վոլորման կողմը և դիպչում է նշանից
մի քիչ ցածր. դ) Փոքր հատիկով կրակելիս գըն-
դակը նշանից կցածրանա. մեծ հատիկով՝ կրարձ-
րանա. Յեթե հատիկը բռնում ենք նշանոցի
դիտոցի աջ կամ ձախ կողքին, գնդակը
խոտորվում է դեպի նույն կողմը. դ) Հրացանը
սահուն կերպով չի չեցնելը, հրացանի կոթը ուսին


ամուր չդնելը, աչքի թարթելը, կրակելիս շունչը չպահելը և այլն, այս բոլոր թերությունները ազգում են գնդակի ցրելուն այս կամ այն կողմը:

27. Գնդակի թռիչքի վերոհիշյալ անկանոնությունների առաջն առնելու համար, ավելի լավ է վերացնել հենց դրանց պատճառները: Սակայն այդ միշտ հնարավոր չե: Այդպիսի դեպքերում գնդակներիդեպի աջ կամ ձախ խոտորումներին հակազդելու համար, համապատասխան կերպով պետք է տեղափոխել նշանակետը դեպի աջ կամ ձախ: Բարձր կամ ցածր խոտորումների առաջն առնելու համար, պետք է բարձրացնել կամ ցածրացնել նշանոցը (փոքր նշանոցի ժամանակ միայն նշանակետը բարձրացնել): Ուղղումների աստիճանը (չափը) պետք է վորոշել արձակելուց առաջ, բայց այդ հնարավոր է մոտավորապես. վերջնական ուղղումները պետք է կատարել առաջին գնդակները ընկնելու կամ կպչելու տեղը դիտելուց հետո: Յեթև հեռավորությունը հրացանաձգին հայտնի չե, գնդակը նիշտ դիպցընելը անհնարին և առանց դիտելու:

Դ. Գնդակների ցրումը.

28. Յեթե միևնույն հրացանով կրակենք միքանի անգամ նշան բռնելով միևնույն կետին նույնիսկ կատարելով այն բոլոր կանոնները, վորոնք անհրաժեշտ են գնդակը դիպուկ դարձնելու հա-

մար (կրակողը լինի լավ հրացանաձիգ, հրացանը սարքին, լավ փամփուշտներով, խաղաղ յեղանակին և այլն), մենք կը տեսնենք, վոր բոլոր արձակած գնդակները մի կետի վրա չեն ընկնի, այլ կցրվեն մի վորոշ տարածության վրա։ Այս յերեսույթը կոչվում է զնդակների ընական ցրում։ Այս առաջ է գալիս զանազան չնչին, աննկատելի և անվերացնելի պատճառներից. որինակ՝ կրակելուց առաջացած փողի տար-



բեր ցնցումները, փամփուշտների մեջ յեղած փառողի կամ գնդակների տարբեր կշիռը, ողի տարբեր տատանումները, հրացանաձգի արած ակամայից սխալները և այլն։

29. Ուղղանայաց մակերեսույթի վրա շտո գընդակներ արձակելուց ցուման մակարդակը (գնդակ-

ների ընկած տեղը) կազմում ե մի շրջան մի քիչ
յերկարացած ըստ բարձրության: Այդ շրջանի
կենտրոնը կլինի դիպչելու միջին կետը, այս-
ինքն. այնպիսի կետ, վորի շուրջը գնդակները
տեղափորփում են հավասար չափով: Դիպչելու մի-
ջին կետի շուրջը գնդակները ավելի խիտ են
տեղափորփում և, վորքան հեռանում ես այս կե-
տից, այնքան նոսրանում ե գնդակների տեղափոր-
փումը: Բոլոր արձակած գնդակների կեսը գրա-
փում ե ցրման մակարդակի մեջտեղը, կազմելով
մի փոքրիկ շրջան, վորը իր լայնությամբ մոտ
3 անգամ փոքր ե լինում ամբողջ ցրման մա-
կարդակից: Այդ շրջանը կոչվում ե զնդակների
ցրման միջուկ:

30. Թե ցրման մակարդակի չափը և թե
գնդակների ցրման միջուկի չափը անորոշ են
լինում. փոքր տարածության վրա կանոնավոր
հրացանով լավ հրացանաձգի կրակելիս, բարե-
հաջող պայմաններում փոքր են լինում, հակա-
ռակ պարագաներում—մեծ են լինում և յերբեմն
ել շատ մեծ: Յեթե հանձնարարփում ե մի լավ
հրացանաձգի կրակել ստուգման սեղանի վրա
միջակ հրացանով, այդ ժամանակ միջուկի չա-
փերը ուղղահայց նշանի վրա միջին հաշվով կը-
լինեն հետևյալը.

| Հեռավորություն | 200 | 400 | 600 | 800 | 1000 | 1200 | Քայլ |
|--|-------|-------|-------|----------|----------------|----------------|--------------|
| Ցրման միջուկի չափը ըստ բար- ձրության և ըստ լայնության (մի- ջին հաշվով) | $1/4$ | $1/2$ | $3/4$ | 1 | $1\frac{1}{4}$ | $1\frac{1}{2}$ | Արևին |

անձիշտ պայմաններում վատ հրացանաձգի հրաձրդությունը կտա, ինարկե համեմատաբար վատ հետևանքներ։

31. Գնդակները ցրվելով ուղղահայաց մակերեսութիւնի վրա՝ ցրվում են նաև հորիզոնականի վրա (գետնի յերեսին)։ Սակայն ցրման մակարդակը հորիզոնական նշանի վրա չի ունենալ այն շրջանի ձևը, վորը ստացվում է ուղղահայացի վրա։ Հորիզոնական նշանի վրա ցրման շրջանի լայնությունը նույնը կլինի, ինչ վոր ուղղահայացի վրա. բայց յերկարությունը (հեռավորությունը) այնքան մեծ կլինի, վորքան հրաձգության հեռավորությունը (հրացանաձգից մինչև նշանը) փոքր է. վորովհետեւ յերբ մենք հրաձգության հեռավորությունը մեծացնում ենք, գնդակները ընկնում են ավելի ու ավելի ուղղորդ կերպով. (գլեթե ուղղահայաց)։ Հորիզոնական ցրման մակարդակի մեջտեղը նույնպես կա տիպչելու միջին կետ և միջուկ, վորի յերկարությունը և լայնությունը մոտավորապես 3 անգամ փոքր է քան ամբողջ հորիզոնական ցրման մակարդակը։ Միջուկի չափը ըստ հեռավորության վերոհիշյալ պայմաններում (տես հոդված 30) հետևյալն է.

| Հեռավորությունը | 200 | 400 | 600 | 800 | 1000 | 1200 | Քայլ. |
|-------------------------|-----|-----|-----|-----|------|------|-------|
| Միջուկի յերկարությունը: | 160 | 140 | 120 | 90 | 75 | 65 | Քայլ. |

վատ հրածգության ժամանակ միջուկի չափը ա-
վելի մեծ կլինի:

32. Գնդակների այսպիսի ցրումը հնարավո-
րություն չե տալիս հրացանաձգին մի գնդակով
հարվածելու հեռավոր կամ փոքր նշանը: Սա-
կայն մյուս կողմից այդ ցրումը նպաստում է
դիպչելուն. ահա թե ինչու. կովում հրացանա-
ձիգը միշտ չի կարողանում իմանալ մինչև նշանն
յեղած իսկական հեռավորության չափը, ուստի
և չի կարող ճիշտ նշանոց դնել կամ գտնել
ճիշտ նշանակեալ: Յեթե ցրումը չինի, այն ժա-
մանակ, յեթե նշանոցի սխալը լինում է հարվա-
ծելի առածության յերկարության չափով (վոչ
ավելի) վոչ մի գնդակ չի կարող հասնել իր նպա-
տակին (տես հոդված 22): Իսկ ցրման ժամա-
նակ յեթե գնդակներից մի քանիսը ընկնում են
մի կողմը, մյուսները մյուս կողմը, տեսնում ենք,
վոր յեթե վոչ բոլորը, գոնե մի քանիսը հաս-
նում են իրանց նպատակին: Սակայն յեթե նշա-
նոցի մեջ այնպիսի սխալ է գործվում, վոր այդ
սխալը ավելի մեծ է միջուկի և նույնիսկ ցրման
մակարդակի չափերից, նշանը կմնա անվնաս:

33. Ասածներից յերևում է, վոր յեթե նույն-
իսկ նշանը ընկնում է միջուկի մեջ, այնուամենայ-
նիվ նշանին դիպչելու համար անհրաժեշտ է բաց
թողնել մի քանի գնդակ, յերբեմն և շատ: Ու-
րեմն գնդակի դիպչելը հաստատ չի կարող լինել,

այլ ավելի կամ պակաս հավանականությամբ։
Գնդակների իրանց նպատակին հասնելու հավա-
նականությունը մեծ է այն դեպքում, յերբ նշա-
նը մեծ է և գնդակների ցրումը փոքր է (խիտ
է), այսինքն, յերբոր հրաձգությունը լավ է և
հեռավորությունը փոքր է։ Յեվ ընդհակառակն,
յեթե ցրումը շատ մեծ է (որինակ յերբ հեռա-
վորությունը մեծ է հրաձգությունը կատարվում
է անուշադիր, անշնորհք կամ շտապ, ջղայնացած,
վատ զենքով և այլն), այն ժամանակ արձակած
բազմաթիվ գնդակներից կարող են դիպչել նշա-
նին պատահական գնդակներ։

34. Ամենափոքր ցրումով հրաձգությունը,
հեռավորության համեմատ կոչվում է կուտակված
հրաձգություն։ Վորքան դիպչելու միջին կետը
մոտ է նշանի մեջտեղին, այնքան հրաձգությունը
կլինի դիպուկ։ Պարզ է, վոր գնդակների կու-
տակումը ամեն ջանք գործ դրած դեպքում ան-
հնարին է հասցնել մի կետի։

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱԶԳՈՒ- ԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

35. Մարտի ժամանակ միշտ պետք է պատրաստ լինել կրակելու թե տեղում (կանգնած ժամանակ) և թե շարժման ժամանակ. հրացանը լիքը, հրահանը պահպանիչ վուրքին դրած, անընդհատ դիտելով կռվի դաշտը:

36. Յերբ հրացանաձիգը ցուցում է ստանում վորեւ նշանի կրակելու, նա պետք է արագորեն գտնի նշանը և հարմարվելով տեղին, հրացանին հենարան պատրաստի և իրան համար ծածկարան թշնամու աչքից. յեթե նշանի ճակատը լայն է, պետք է կրակի տակ վերցնել այն մասը, վորը գտնվում է իր դիմացը. Այդ դեպքում նա պարտավոր է հարմարվել իր հարեան հրացանաձիգներին, վորպեսզի աչքաթող չանի նշանի վրա վոչ մի մաս առանց հարվածելու. Յեթե նշանը ցույց չի տրված, առաջին հերթին պետք է հարվածել այն նշանները, վորոնք համարվում են վտանգավոր, համեմատաբար ավելի յեն խանգարում և հեշտ է հարվածել:

37. ՅԵթե իր դիտողության շրջանում կամ
իրանից շատ մոտիկ հանկարծակի յերեան վտան-
գավոր կամ ձեռնտու նշաններ (լավ հարվածվող)
ինչպիսիք են թշնամու պետերի խմբակը, գնդա-
ցիրները, վազելով առաջացող խմբակները, զրա-
հապատը, հրանոթը և այլն, հրացանաձիզը վոչ
միայն իրավունք ունի, ալև պարտավոր ե առանց
պետից ցուցումներ ստանալու, տեղափոխել իր
կրակը վերոհիշյալ նշանների վրա, աշխատելով
վոչնչացնել նրանց. կամ յեթե ընկերոջը անհրա-
ժեշտ ե շուտափույթ կրակով ովնություն, նույն-
պես պարտավոր ե ոգնել. սակայն աչքաթող
չպետք ե անի նաև պետի ցույց տված նշանը:

38. Նշանոցի ընտրությունը պետք ե անել
պետի ցուցումով. յեթե ցուցում չի յեղել, գերա-
դասելի յե գործադրել նշանոցը հեռավորության
համեմատ. միայն մոտիկ նշանների վրա կրա-
կելիս շտապելու դեպքում, ոգտվել մշտական
նշանոցով, փոխելով նշանակետը (տես հոդ-
ված 23):

39. Նշանակետը, ինչպես ընդհանուր կանոն,
ըստ բարձրության պետք ե լինի նշանի կամ
առարկայի ներքեկի յեզրը, ըստ լայնության՝
նշանի մեջտեղը: Բայց յերբ հրացանաձիզը նա-
խատեսնում ե, կամ նկատում ե գնդակների ան-
դրբագառալուց նրանց խոտորումը դեպի վեր,

ցած կամ մի կողմը, նա պետք է փոխի նշանաւ-
կեռը այնպես, վոր նշանին դիպչի:

40. Կրակի արագությունը պետք է հար-
մարեցնել հանգամանքներին. առնասարակ ունետք
է կրակել հաշվով և հանդիսա, ճշտորեն նշան
բռնելով ամեն մի զնդակ և ըստ կարելույն դի-
տել նրա ընկնելը. արագացնել կրակը, յերբ
նշանը հեշտությամբ է հարվածվում և ընդհակա-
ռակն, դանդաղեցնել յեթե դժվար է դիմույնել
նշանին: Ամենասարագ կրակը անհրաժեշտ է. ա)
բռնամարտին դիմելուց առաջ, բ) գրոհ տվող թրշ-
նամուն յետ շպրտելու համար, գ) նահանջողին
հետապնդելիս, դ) թշնամու մեծ ուժի վրա փոքր
ուժով հանկարծակի հարձակում գործելիս, յե)՝
կարեռ և արագ թաքնվող նշանների դեմ: Իրա-
կի արագությունը հասցնել մինչեւ նրա դիսլուկու-
թյունը կորցնելը, նշանակում է իզուր փշացնել
փամփուշտները, վորոնք շտա թանգ արժեն մար-
տի դաշտում: Մի ըովեյում ավելի քան 8-10
փամփուշտ կրակելը միտք չունի (դիպուկ կրակ
ունենալու համար 1 ըովեյում 8-10 փամփուշ-
տից ավելի չի կարելի կրակել):

41. Պետի հրամանով կամ սուլոցով և կամ
նշանակված թվով փամփուշտները կրակելուց
հետո անհապաղ դադարեցնել կրակը. այդպես
ոլետք է վարվել, յեթե նշանը վոչնչացված է,
խնդիրը լուծված և կրակելու կարիքը անցել է:

ՅԵթե հրացանաձգի դիմաց գտնվող նշանը կամ վայրը պարզ չի յերևում համեմատաբար նրանց մոտ գտնվող այլ նշանների, այդ իբրև հիմք չի կարող ծառայել կրակը դադարեցնելու կամ տեղափոխելու ուրիշ նշանների վրա:

ԺԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. ՅԵթե հարվածվող նշանը ծածկվել է, վսիղաժամ ե դեռ կրակը դադարեցնելը, անհրաժեշտ ե ոգնել ընկերոջը:

42. Մարտի ամբողջ ընթացքում անպայման պետք ե գիտենալ իր մոտ յեղած փամփուշտների հաշիվը, ոգտվել ամեն մի հարմար դեպքում, լրացնելու փամփուշտների սահմանվածքանակը (վիրավոր և սպանված զինվորների փամփուշտներով): ՅԵթե փամփուշտների մոտ կեսը բանեցված ե, անմիջապես հայտնել ողակապետին: Մեկ տուփ փամփուշտը մինչև կովի վերջը պահել անձեռնմխելի:

ՀՐԱՉԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

43. Մարտում հաճախ ե պատահում կրակել շարժվող նշանների վրա. սովորաբար թշնամին ծածկված ե լինում և չի յերևում հրացանաձրդին: Նա ճիշտ հարվածվում ե այն դեպքում, յերբ նա դուրս է գալիս ծածկարանից, վաղելով տեղափոխվում ե ուրիշ տեղ: Այդ ժամանակ

հրացանաձիգը ողտվում է հանդամանքից և նրան
հարվածում է:

44. Բայց չպետք է մոռանալ, վոր ընդհան-
րապես շարժվող նշանին անհամեմատ ավելի
դժվար է դիպջնել, քան թե անշարժ նշաննե-
րին. հրացանաձիգ պահանջվում է աչքաչափ,
ճարպիկություն, արագ ու դիպուկ կրակ: Դան-
դաղկոտ և անշնորհք հրացանաձիգը այս դեպքում
անպետք է:

45. Յեթե նշանը շարժվում է ուղիղ դեպի
հրացանաձիգը կամ նրանից հեռանում է, կարե-
լի յե նրան աջողությամբ խփել նույն կանոն-
ներով, վոր սահմանված են անշարժ նշանների
համար: Գնդակը թռչելու վարյկյանից կարող են
հարվածվելուց ազատվել միայն այն նշանները,
վորոնք չափազանց արագ են շարժվում, ինչպի-
սին են՝ սավառնակը, ավտոմոբիլը և այլն. սը-
րանք հեշտությամբ կարող են դուրս գալ հար-
վածելի տարածությունից և ցրման միջուկից
(ըստ հեռավորության): Չպետք է մոռանալ, վոր
նշանը շարունակում է իր շարժումը և այն ժա-
մանակ, յերբ հրացանաձիգը դրաղված է լինում
հրացանը լցնելով, նշանոցը դնելով և նշան
բռնելով: Ուստի նշանոց պետք է դնել վոչ թե
այն հեռավորության համեմատ, վորի վրա նշանը
այդ վայրկյանին դանվում է, այլ այն, վորի վրա
նաև դնդակը արձակելու վայրկյանին կգտնվի:

Նշանոցի ուղղումները սկսուք եւ անել վճռական և
մոտավոր ճշտությամբ. առաջացած սխալները կ'ուղ-
ղըվեն զնդակների ցրման և սփոման հետեանքով:
անդադ շարժվող նշաններին (հետեակին) կրակելիս
պետք է փոխել նշանոցը միանգամից 2-ով (յեթե
նշանոցը 12-ե՞ դարձնել 14). իսկ արագ շարժվող
նշաններին (արշավող հեծելազորին, զրահասպատին)
միանգամից 4-ով. ավելի լավ է այսպես անել,
պատրաստվել կրակելու նշան ըսնելով տեղա-
կան վորեե առարկայի վրա, շարժվող նշանի
ուղղությամբ և սպասել մինչև վոր նշանը նրան
(առարկային) մոտենա և ապա կրակել արագ և
դիպուկ կրակով:

46. Յեթե նշանը շարժվում եւ դեպի աջ
կամ ձախ (ճակատի ուղղությամբ), նշանոցի
ընտրությունը այնքան ել դժվար չե. դժվար եւ
նշանակետը ընտրել կողքի ուղղությամբ: Յեթե
ուղղակի կրակենք նշանին, այս դեպքում կտ-
րող եւ նշանը չհարվածվել, վորովհետեւ ցրման
միջուկի լայնությունը շատ փոքր ե. զնդակի
թոշելու ժամանակ նշանը կարող է հեշտությամբ
անվնաս դուրս գալ միջուկի մակարդակից:
Այդ յերեսում եւ հետեւյալ թվերից.

դժվար ե, քան թե նույնիսկ ծիծեռնակին թըռչելիս խփելը։ Մեծ խմբով հրացանաձիգների կենտրոնացած հրաձգությամբ միայն հնարավոր ե աջողություն ունենալ, այն ել, յերբ սավառնակը գտնվում է 1000—1500 քայլ բարձրության կամ հեռավորության վրա (լավ կամ գնդացիրներով):

ՀՐԱՉԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԻՇԵՐ ԺԱՄԱՆԱԿ

48. Մթության մեջ կրակելը, առանց ցերեկով ձեռք առած նախապատրաստական միջոցների, աջող չի կարող լինել. ուստի հարձակման դեպքում նույնիսկ չարժե լցնել հրացանը. բայց նախորոք զրաված դիրքերը թշնամու հանկարծակի զրոհից պաշտպանելու համար - դիշերային հրաձրգությանը կարող ե ոգտակար լինել։

49. Նախապատրաստությունը կայանում է նրանում, վոր վազորոք վորոշվում ե թշնամու հարձակման և զրոհի ուղղությունը, տրվում ե յուրաքանչյուր զինվորին վորոշ ուղղություն, դեպի ուր պետք ե ուղղել գնդակները թշնամու հարձակման դեպքում։

50. Ցուցումներ ստանալով, յուրաքանչյուր հրացանաձիգ պարտավոր ե ցերեկով պատրաստվել, հրացանը դնել հողակույտի վրա, ուղղել նրան այնպես, վոր գնդակները կարողանան թըռ-

չել պետի ցույց տված ուղղությամբ. վորպեսզի հրացանը տեղահան չլինի, պետք է պատրաստել հենարան և խեչակներ. կարելի յե նրա վերեկից ծածկել հող լցրած պարկով։ Հրացանի համար հարմար տեղ պատրաստելուց հետո, կարելի յե վերցնել հրացանը և կարիք յեղած դեպքում նշանակած տեղից կրակել։

51. Գիշերային հրաձգությունը կատարվում է միմիայն պետի կազմադրությամբ ամբողջ ճակատով միասին։ Ի միջի այլոց թշնամու հետախույզներին վախեցնելու համար նշանակվում են պետի կողմից առանձին հերթապահ զինվորներ, վորոնք կրակում են հետախույզների մոտենալու դեպքում։

52. Լուսնյակ գիշերը կամ արհեստական լույսի տակ (լուսարձակի, հրդեհի և խարույկի տակ) կարելի յե կրակել նույն հրաձգային կանոններով, ինչ վոր ցերեկ ժամանակ։ Զպետք է մուանալ, վոր այս պայմաններում չի կարելի հավատալ աչքաչափին. կարելի յե մեծ սխալներ գործել։ Հրացանաձիգը պետք է խուսափե մթության միջից նայելու արհեստական լույսի աղբյուրին, հակառակ դեպքում յերկար ժամանակ մթության մեջ նա վոչինչ չի տեսնի։

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ԲԱՆԵՑՆԵԼԸ ՅԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ

53. Մարտում փամփուշտներ բանեցնելուն պետք է վերաբերվել շատ խնայողաբար, նույն-

իսկ ժամանութեան, վորովինեան փամփուշտների անհաշիվ բանեցնելը (մանավանդ կորցնելը) կարող է դժվար պայմանների մեջ դնել հրացանաձգին։ Սակայն կանգ չպետք է տոնել փամփուշտներն առատութեան բանեցնելու, յեթե հավատացած ես, վոր կարող ես թշնամուն լուրջ կորուստներ պատճառել։

54. Հրացանաձիզը փամփուշտների պաշարը կրում է փամփշտակալի և պահեստի պայուսակի մեջ։ Տեղ չդանելու դեպքում գրպաններում և իրերի տույլակիներում։

55. Յուրաքանչյուր հրացանաձիզ պարտավոր է հոգ տանել վոչ միայն թիկունքից փամփուշտներ ստանալու, այլև սպանված ու շարքերից հեռացող ընկերներից, թողնելով վիրավորների մոտ մեկ մեկ տուփ փամփուշտ։

ՄԱՍ Ի.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՄԿԱԶՄԻ
ՀԱՄԱՐ

ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐՈՅԱՆՄՆԵՐ

56. Հրամաբուժմ շարքային հրամկազմի հրածգական դերն ե՝ բոլոր տեսակի հրածգական գենքերի կրակը կառավարելու պարտականությունները։ Բատ եյության այդ հասկացողությունը բաժանվում է յերկու տարբեր պարտականությունների։ Առաջին—հետեւ կոմի ընթացքին, նշանակել կրակային խնդիրներ և նրանց մեջ բաժանել այդ խնդիրները լուծելու համար ձեռքի տակ յեղած կրակի միջոցները։ յերկրորդը—անմիջապես դեկավարել հրացանաձիգներին և նշանառիրներին՝ նպատակ ունենալով կազմակերպել նրանց կոլեկտիվ աշխատանքը և կենտրոնացնել նրանց հրածգությունը հարգածելի նշանների վրա։ Վերահիշյալ պարտականություններից առաջինն ընդհանրապես կայանում է մարտը կառավարելու մեջ և մարտում հատուկ է բոլոր շարքային հրամանատարներին

մինչև գումարտապետը ներառյալ։ Այստեղ այդ
մասը չի հիշվում, վորովհետեւ վերաբերում է
գործնական ուղմավարության շրջանին։ Ներկա
վրքույկում, վոր զուտ հրաձգական ձեռնարկ է,
կրակի ղեկավարությունը հասկացվում է միայն
նեղ տեխնիկական մոքով, վոր արտահայտված
է վերևումը հիշված հոդվածի յերկրորդ վո-
րոշման մեջ։

57. Այժմյան խմբական մարտերի դժվարին
պայմանները հնարավորություն են տալիս
ողակապետին միայն կառավարելու անմիջապես
իրեն հանձնված փոքրիկ միությունը—ողակը,
սակայն վոչ միշտ։ Մոտիկ տարածության վրա
կրակի վարելու պատասխանատվությունը բնա-
կանաբար անցնում է ամբողջովին հրացանաձիգ-
ներին։

ՀՐԱՑԱՆԱՅԻՆ ԽՄԲԱԿԱՆ ԿՐԱԿԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՎՆԵՐԸ

58. Խմբական կրակ անվան տակ պետք է
հասկանալ մի քանի հրացանաձիգների միասին
կրակ բանալն ընդհանուր նշանոցով, միևնույն
նշանի վրա (յերբեմն գնդացիրների կամ ավտո-
մատների հետ միասին) և մի ընդհանուր կետի
կամ բնագծի նշան բռնելով։ Այսպիսով խմբա-
կան կրակի ժամանակ գործ էս ունենում վոչ
թե առանձին գնդակների, այլ մի քանի հրա-

ցաններից բաց թողած խրձանման գնդակների
հետ:

59. Գնդակների ցըռւմը խմբական կրակի
ժամանակ կատարվում է նույն՝ կանոններով,
ինչ վոր միայնակ հրածգության ժամանակ։ Սա-
կայն ցըռման մակարդակի չափերը համեմատա-
բար մեծ են լինում, վորովհետև հրածգությու-
նը կատարում են զանազան հրացանաձիգներ,
տարբեր հրացաններով, մասամբ ել ցըռման մա-
կարդակի մեծացման վրա ազդում է զինվորների
միմիանց հետ գործելը (զինվորները ջղայնա-
.նում են)։

60. Յեթե կրակը կենտրոնացած է մի կե-
տում, ցըռման մակարդակն ուղղահայաց տարա-
ծության (նշանի) վրա շրջան է կազմում, իսկ
հորիզոնական նշանի վրա—դեպի խորքը յերկա-



բացած մի նեղ շերտ։ Յեթե կրակը բաժանվում
է խմբական լայն նշանի ճակատի վրա (որինակ
թշնամու ողակի) այսինքն։ Նշան է բռնվում վոչ

թե մի կետի, այլ կրակող զորամասին զուգահեռական մի գծի վրա, այդ գեպըում ցըման մակարդակը պահելով իր սովորական բարձրությունը (խորությունը) լայնանում եւ ճակատի վրա, նշանի ճակատի տարածությանը համապատասխան կերպով, և ընդհանրապէս ստացվում եւ ավելի կամ պակաս կանոնավոր քառանկյունու ձև:

61. Յեթե այդ քառանկյունու միջոցով անցկացնենք մի գիծ, վորը նշանի ճակատին զուգահեռական լինի և քառանկյունին բաժանի յերկու հավասար մասի, այդ գիծը կհամապատասխանի նշանոցի հեռավորությանը, և կոչվում եւ դիպչելու միջին կետերի գիծ. ուրիշ խոսքով ասած, այդ գծի վրա յեն գտնվում բոլոր դիպչելու միջին կետերը:

62. Գնդակներն այդ դիպչելու միջին կետերի գծի յերկու կողմում տեղափորկում են մոտավորապէս հավասար՝ կեսը բարձր (հեռու), կեսը—ցածր (մոտիկ) բայց վոչ համաչափ. ամմիջապէս գծի մոտ ավելի խիտ են լինում և քանի հեռանում, այնքան ավելի ու ավելի նոսրանում են: Քառանկյունու ամբողջ ճակատով գնդակները շատ թե քիչ համաչափ տեղափորկում են, և այս կախված եւ հրացանաձիգների մեջ նշանի ճակատի վրա կրակի համահավասար բաժանելուց:

63. Ցըման մակարդակի լայնքի միջին շեր-

տը, վորը պարունակում է իր մեջ արձակած գնդակների 70% և իր բարձրությամբ (խորությամբ) կազմում է ցրման մակարդակի $\frac{1}{3}$ մաս—կոչվում է միջուկային շերտ:

Տեղեկանք: Միջուկի չափերը ըստ հեռավորության (խորության) պոլիգոնական տըվալների համաձայն հետևյալներն են.

| | | | | | |
|------|------|--------------------|-----|-----|------|
| 500 | քայլ | հեռավորության վրա, | մոտ | 500 | քայլ |
| 1000 | » | — | » | — | » |
| 1500 | » | — | » | — | » |
| 2000 | » | — | » | — | » |

Մարտի պարագայում ել ավելի մեծ են լինում միջուկի չափերը:

64. Նշանին լավ հարված հասցնելու համար անհրաժեշտ է նշանը միացնել դիպչելու միջին կետերի գծի հետ, այսինքն, յերբ նշանոցը ճիշտ է դրված: Մակայն աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, վար մարտի դաշտում, դժվարին պայմաններում անհնարին է ճիշտ նըշանոց դնելը, յեթե վաղորոք հեռավորությունը, մինչև նշանը չափված չե, գործնականում բավականանում ենք նշանն առնելով ցրման մակարդակի միջուկային շերտի մեջ, ընդունելով, վոր միջուկային շերտում ընկած գնդակների խտությունը համահավասար է: Այսպիսի պայմաններում գնդակների դիպչելու հավանականությունը խմբական նշանին՝ այնքան ավելի

մեծ է, վորքան ավելի մեծ է նշանի հարվածելի մակերեսութիւնի բարձրությունը (խորությունը), վորքան նշանն ավելի խիտ է, այսինքն. խմբական նշանի պատկերները (մարդիկ) մոտ են դասավորված, և վորքան ավելի կուտակված և սփռված են ընկնում գնդակները (լավ հրացանաձիգներ և փոքր հեռավորություն):

65. Վերոհիշյալ հոդվածում (64 հոդված) ասածները ճիշտ են միայն այն դեպքում, յերբ ցրման միջուկը ըստ լայնության ծածկում է նշանը: Սակայն կոլեկտիվ կրակը (խմբակային կրակ) նույնպես, նույնանման պատճառներից խոտորումներ են կատարում, ինչպես առանձին գնդակը: Ողակի կրակը վարող հմուտ պետի գործն է նախատեսել այդ խոտորումները և միջոցներ ձեռք առնել հակազդելու խոտորումներին՝ հրացանաձիգներին համապատասխան ցուցումներ տալով նշանակետերի և նշանոցների բարձրության վերաբերյալ: Յերբ ցրման միջուկային շերտը կուտակված գնդակներով ծածկում է նըշանի մակարդակը, խմբական հրաձգությունը կոչվում է դիպուկ (սա յե խմբական կրակի դիպուկությունը):

Տեղեկանք: Զանազան պատճառներից առաջացած խոտորումների չափը.

| Հեռավորու- թյուն. | Դեպակի մի կողմը. | Հստ բարձ- րության. | Հստ հեռագո- րության. |
|------------------------------------|-----------------------------------|-------------------------------------|---------------------------------------|
| | Շեղումնելց. | Կողքի մի քամուց. | Զեղումնելց. |
| 500 | — | $1\frac{1}{2}$ | — |
| 1000 | $\frac{1}{4}$ | 2 | $\frac{1}{4}$ |
| 1500 | 1 | 6 | $1\frac{1}{2}$ |
| 2000 | $2\frac{1}{2}$ | 12 | 5 |
| | | | $\frac{2}{3}$ |
| | | | 3 |
| | | | 75 |
| | | | 50 |

Ծանոթություն: 1. Թույլ քամուց առաջացած կողքի խոտորումները յերկու անգամ ավելի փոքր են, իսկ ուժեղ քամուց առաջացածները յերկու անգամ ավելի մեծ են, քան միջուկի համար ցույց տված թվերում: 2. 20° R սառնամանիքի ժամանակ խոտորումները բարձրությամբ և հեռավորությամբ յերկու անգամ ավելի մեծ են, քան աղյուսակում ցույց տվածները. 3. Աղյուսակի միջի գծիկները ցույց են տալիս խոտորումների աննշան լինելը:

66. Խմբական նշանին իրական հարված հասցնելը (շատ ֆիզուրներ—մարդիկ շարքից հանելու մտքով) կախված է բացի դիպուկ կրակից նաև 1. Նշանը հարվածելու համար նշանակած հրացանաձիգների և նրանց արձակած փամ-

փուշտների թվից (ուրեմն և ժամանակից)։
2. Կրակը նշանի ճակատի վրա համահայսարքա-
ժանելուց։ Բնական ե, վոր յերկար ճակատ ու-
նեցող նշանի մի կամ մի քանի պատահական
կետերում կրակի կենտնոնացման ժամանակ,
նույնիսկ մեծ քանակությամբ գնդակներ դիպ-
չելու դեպքում։ Հարվածվող պատկերների թիվը
կլինի աննշան։

Եյական կարելորություն ունի նաև հար-
վածի արագությունը, միևնույն կորուստները, վոր
կրում ե զորամասը յերկու ժամվա կամ յերկու
բոլեյի ընթացքում թողնում են միանգամայն-
տարբեր տպավորություն։

ԽՄԲԱԿԱՆ ԿՐԱԿԸ ՎԱՐԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Հնորիանուր ցուցումներ.

67. Պետք իր ձեռքը վերցնելով հրածիկ
խմբակի կրակի զեկավարությունը պարտավոր ե.
1. Դիտել մարտի դաշտը հրածդային տեսակե-
տից. 2. Գնահատել յերեան բերած նշանները և
ընտրել կարելորները (վորոնք խանգարում են),
վորոնց առաջին հերթին հարկավոր ե հարվածել.
3. Ցույց տալ հբացանածիզներին այդ նշանները
և կարիք յեղած դեպքում բաժանել նշանները
հբացանածիզների, գնդացիրների կամ ավտո-
մատների մինչեւ. 4. Նշանակել ընդհանուր նշա-

նոցի բարձրությունը, հնարավոր դեպքում նշանակետերը կամ բնագիծը, փորձնական հրածզություն կատարել նշանի հեռավորությունը ճիշտ իմանալու համար. 5. Հնարել կրակի տեսակը. 6. Դիտել հրածզության հետևանքները, ուղղումներից մտցնելու և նրա զործոնությունը վորոշելու համար. 7. Կատարել իր ժամանակին կրակի տեղափոխությունը, ընդհատումը և դադարեցընելը. 8. Պահել բանեցրած փամփուշտների հաշիվը և հոգ տանել թիկունքից լրացնելուն. Կովի գժվարին պայմանները թույլ չեն տալիս պետին կատարել. իր վրա դրած վերոհիշյալ պարտականությունները. Ուստի նա ստիպված է լինում միայն իրեն վերապահել կովի դաշտը դիտելը, նշաններ նշանակելը և կրակ բանալու կամ դադարեցնելու իրավունքները՝ թողնելով մնացած անհրաժեշտ ցուցումները հրացանաձիգների ինքնուրույնությանը. Պետք ամեն դեպքում, քանի շարքից դուրս չի յեկել, պարտավոր ե դեկավարել իր խմբակի հրացանաձիգներին, հակառակ դեպքում նա իր վրա դրված պատասխանատու պարտականությունը չի կարող կատարել:

Մարտադաշտը դիտելը.

68. Մարտադաշտը սուր աչքով անընդհատ դիտելը հնարավորություն ե տալիս պետին իր ժամանակին դանել նշանը և ունենալ վաղորոք

պատրաստի տվյալներ աջող կրակելու համար։
Այդ հնարավորություն եւ տալիս նրան, կանխել
հակառակորդի կրակ բացելը և ձեռքից բաց
չթողնել հրածգության ամենաձեռնուու վայրկյան-
ները։

69. Մարտադաշտը դիտելը արդյունավոր
դարձնելու համար անհրաժեշտ եւ ուշադրությամբ
և մանրամասնորեն ուսումնասիրել դաշտը հրա-
ցանի կրակի հեռավորության սահմաններում,
թե վորտեղ կարելի յէ սպասել վտանգավոր և
ձեռնուու նշանների յերևալուն և վորտեղ են
դանվում հրացանաձգի աշքից ծածկված և մե-
ռյալ տարածությունները, խոչընդուները և այլն։
Ուսումնասիրությունը կատարվում եւ բարձր դի-
տակետից անձամբ կամ հետախույզների միջո-
ցով։

70. Բացի նշաններ գտնելուց՝ դիտողության
խնդիրներից մեկն ե նաև կրակ բանալու նախա-
պատրաստությունը, գլխավորապես հեռավորու-
թյան չափելը։ Յեթե ժամանակը թույլ ե տալիս
և հնարավոր ե, այդ դեպքում ողտակար ե նըշ-
մարել դաշտում մի քանի կողմորոշ կետեր, վո-
րոնց շրջանում թշնամու յերևալը հավանական
է։ Վաղորոք պետք ե չափել այդ կետերի հեռա-
վորությունը, գոնե աշքի չափով և դրել հիշո-
ղության համար։

71. Դիտողությունը պարտավոր ե կատա-

քեւ ինքը պետք իր ընտրած ոգնականների և
ընդհանուրապես բոլոր հրացանաձիգների ոգնու-
թամբ:

72. Ամեն մի հնարավոր դեպքում պետք է
ոգտվել հեռաղիտակով և ուրիշ գործիքներով
հեռափորությունը ճշտորեն վորոշելու համար
(հեռաչափով):

Նշանի ընտրությունը.

73. Թե կրակը յերբ պետք է բանալ, ինչ
ուղղություններով և ինչպիսի նշանների վրա,
այդ կախված է գլխավորապես մարտի ուղմա-
վարական պարագայից: Առհասարակ ամեն մի
յերեացող նույնիսկ ձեռնտու, հրաձգային տեսա-
կետից, նշան, չպետք է դրդի կրակ բանալու.
Ծնդհակառակը հրացանաձիգները պարտավոր են
հարձակողական մարտում իրանց ամբողջ ուշա-
դըրությունը դարձնել առաջ ձգտելու, թողնելով
հրետանուն և գնդացիրներին թշնամու կրա-
կից պաշտպանությունը: Իսկ պաշտպանողական
մարտում—բոլոր ջանքերով պատրաստվել թշնա-
մուն վճռական հականարված տալու մոտիկ հե-
ռափորութան վրա: Սակայն այն դեպքերում,
յերբ գնդացիրները մենակ չեն կարողանում հե-
տեւակին ճանապարհ բանալ, կամ նրանց
կրակը վորեն պատճառով դադարել է, կամ հար-
կավոր է նրանց հեռվից ոզնել թշնամու հար-

ձակման թափը պակասացնելու համար, հրացանաձիգները պարտավոր են միշտ պատրաստ Անել հրամարտին մասնակցելու:

74. Հրացանային կրակի զլխավոր նշանները կլինեն, զրեթե միշտ, մարտի ժամանակ հակառակորդի այն մարտական գծերը և այն գնդացիրները, վորոնք անմիջապես վարում են մարտը: Սակայն մարտի ընթացքում թշնամու ոժանդակ և նեցուկ մասերը, ձիավոր խմբակները, մարտկոցները, զրահապատները, ականանետերը, նույնիսկ և ողային ապարատները կդառնան զլխավոր նշաններ: Հաճախ հարկավոր կլինի կրակը տեղափոխել մի վորեն կողմ հարեւաններին թևային և շեղ կրակով ոգնելու համար: Սակայն հետևակը չպետք է իր զլխավոր նշաններն աչքաթող անի և միշտ նրանց դեմ պետք է պատրաստ պահի զոնե հրացանաձիգների մի մասը (գնդացիր, ավտոմատ):

75. Պետք է կրակել այն դեպքում, յերբ համոզված ես, վոր կրակով կհասնի իր նպատակին: Այդ կախված է մասամբ մարտի ոլարտգայից և փամփուշաների պաշարից: մասամբ՝ ել նըշանի հարվածելիությունից, այսինքն, նրա հեռավորությունից, չափերից, խտությունից կամ նոսրությունից, նրա տեսանելիությունից և այլն: Յերբեմն հարկավոր ել լինում կրակ բանալ թշնամու վրա միայն բարոյական տպավորու-

թյուն թողնելու նպատակով (թշնամու վողին ընկճելու):

76. Խոշոր նշաններին, խչպիսին են հետ
ծյալ և հետեակ զորասյուները, մարտկոցները և
գնդացրային ջոկերը յերթի ժամանակ, զումակ-
ները և այլն, կարելի յե աջողությամբ հարվա-
ծել ամենաբարձր նշանոցի բոլոր հեռավորու-
թյունների վրա: Բայց հարձակվող խիտ շարքե-
րով հետեազորի և հեծելազորի, նաև դիրքերում
գտնվող մարտկոցների դեմ կարելի յե կրակ բա-
նալ մինչև $2 - 2\frac{1}{2}$ հազար քայլի վրա: Շարժվող
խմբակների և անընդհատ շղթաների դեմ—մին-
չև 1200 քայլի վրա. վազելով տեղափոխվող փոքր
խմբակների վրա—վոչ պահելի քան 1000 քայլի
վրա. դիրքերում պառկած բաց և կիսաբաց
շղթաների և առանձին գնդացիրների դեմ—մին-
չև 800 քայլի վրա. միայնակ աեղին հարմար-
ված հրացանաձիգների դեմ—վոչ հեռու քան
400—500 քայլի վրա:

77. Դիրքերում գտնված հրետանուն պետք
է գնդակոծել կողքերից, աչքի առաջ ունենալով
այն հանգամանքը, վոր հրետանու սպասավոր-
ները (զինվորները) ճակատից պաշտպանվում են
թսդանոթի վահանով:

78. Մեծ հեռավորության վրա արագ շարժ-
վող մոտոցիկլները և թեթև ավտոմոբիլները,
համանափանդ յերբ նրանք շարժվում են ճակա-

տին զուգահեռաբար, դժվար են հարփածվում։ Իսկ մոտիկ, լավ կենտրոնացած հրացանային կրակը վտանգավոր ե նույնիսկ զրահապատ մեքենաների համար։

79. Թոչող սավառնակին կարելի յե հարփածել միմիայն խմբական հրածզությամբ, այն ել յերբ նա լինում ե 1500 քայլի սահմաններում։

Հրացանածիզներին նշաններ ցույց տալը։

80. Պետք ե աշխատել հրացանածիզներին նշաններ ցույց տալ կարճ, համառոտ և պարզ հասկանալի խոսքերով։ Հակառակ դեպքում հրացանածիզը կարող է ընկնել թյուրիմացության մեջ, վորը կուշացնի իր ժամանակին կրակ բանալը։

81. Նշաններ ցույց տալու որինակելի ձեւվեր. ա) դեպի աջ, վազող խմբակին, բ) ուղղակի առանձին ծառը—զնդացրին, գ) ձախ, ջրաղացը մի մատ աջ—ձիավոր խմբակին (հրամկազմի) և այլն։

82. Յեթե նշանը չի յերեսում, բայց դրավում ե մի աչքի ընկնող առարկա կամ բնագիծ, վորը քողարկում ե նշանը, այն դեպքում նշանի փոխարեն կարելի յե ցույց տալ հենց այդ առարկան կամ բնագիծը։ Որինակ՝ ա) ուղղակի անտառը, ծայրին, ձախ անկյունից

մինչեւ առաջին բացատը (բացվածք) ձախ, սպիտակ տունը, վերևի շարքի պատուհաններին:

Նշանոցի բարձրության ընտրությունը.

83. Նշանոցն ընտրելու համար իբրև հիմք ծառայում եւ նշանի հեռավորությունը, վորը ճիշտ չափոված եւ գործիքների կամ փորձված աչքաչափ ունեցող հրացանաձիգների միջոցով (լավ եւ ճիշտ հեռավորությունը վորոշելը հանձնել մի քանի հմուտ, լավ աչքաչափ ունեցող հրացանաձիգներին և նշանոցն ընտրելու դեպքում վերցնել նրանց ասած թվերից միջին թիվը):

84. Յեթե նշանը 1000 քայլից հեռու յեւ, այն դեպքում նշանոցի բարձրությունն ընտրելիս պետք եւ աչքի առաջ ունենալ արտաքին պատճառների ազդեցությունը, վորով կարճանում կամ յերկարանում եւ զնդակների թոփչքի հեռավորությունը (տես հոդված 65):

85. Առաջին հերթին կրակ բանալուն պես՝ անմիջապես պետք եւ դիտել զնդակների դիպչելը և անել հարկավոր ուղղութներ։ Յեթե ժամանակը թույլ եւ տալիս, կարելի յեւ փորձնական կրակ բանալ հեռավորությունը ճիշտ վորոշելու համար։

86. Փորձնական կրակն արվում եւ այսպես. ամբողջ խմբակի հրացանաձիգները կրակում են

համազարկով, ունենալով մի ընդհանուր նշանակետ—վորպեսզի գնդակները կենարոնացնեն մի կետում, դիտողությունը հեշտացնելու համար:

87. Փորձնական հրածգության համար գոյություն ունի յերկու ձև. ա) նշանը կրակի մեջ վերցնել ճանկով յել բ) մոտենալ նշանին վաստյուններով:

88. Փորձնական կրակով հեռավորությունն իմանալու համար, մի վորեե նշանոցով, վորը համարում ենք ճիշտ նշանոց, նշանին համազարկ ենք տալիս և դիտում. յեթե գնդակները չեն համնում նշանին, բարձրացնում ենք նշանոցը 2-ով և տալիս յերկրորդ համազարկը: Յեթե այս դեպքում գնդակներն անցնում են նշանից դեռ, վերցնում են միջին թիվը, վորը կլինի նշանոցի խսկական բարձրությունը և անցնում ենք նշանը հարվածելուն: Յեթե գնդակները լավ չեն դիտվում, կարելի յէ համազարկերը կրկնել կրկնելու անաջողության դեպքում փորձել նորից 2-ով ցածրացնել և ապա բարձրացնել նշանոցը: Ծայրահեղ դեպքում կարելի յէ կրակը տեղափոխել աջ կամ ձախ, մի ուրիշ լավ դիտվող առարկայի կամ տեղի վրա, ցանկալի յէ, վոր փորձնական կրակը կատարվի շոր գետնի վրա, գնդակների ընկնելուց վորը բարձրանալու համար: Մի խոսքով պետք է աշխատել գտնել հեռավորության խսկական չափը, յեթե պայման-

ները թույլ են տալիս և թշնամին չի խանգարում:

89. Փորձնական կրակի նշանին վոստյուններով մոտենալու ձեզ դործ և ածվում այն դեպքում, յերբ անհնարին է կրակել հիշյալ ձեռվով (այդ կատարվում է այն պարզ պատճառով, յերբ չեն յերեսումնշանի յետևն ընկնող գնդակները): Վոստյուններով կրակելու առանձնահատկությունն այն է, վոր փորձնական համազարկերը պետք է սկսել այնպիսի նշանոցով՝ յերբ առաջուց համոզված են, վոր դնդակը նշանին չի հասնելու (4 կամ 6 խաղ ուղակաս, խոկական թվացող նշանոցի հեռավորությունից) և հետո հետզհետեւ բարձրացնում ենք մի մի խաղ, մինչև վոր դիտելով կերևա, վոր միջուկով ծածկրվում է նշանը:

90. Փորձնական կրակի աջողությունը կախված է նշանի մոտերքի վայրից ու գետնից, դիտելու պայմաններից, դիտողների փորձառությունից և այլն: Հրացանաձիգների փոքր խըմբակին այս դժվար է հաջողվում:

Նշանառության համար կետերի (ընազծերի) ընտրությունը.

91. Բնդիանուր կանոն է, վոր բաց և պարզ նկատելի նշանը գնդակոծելու ժամանակ հրացա-

նաձիգները պետք ե առանց պետի ցուցման
նշան դնեն՝ նշանի ներքեսի յեզրի մեջտեղին:

92. Յեթե նշանը քողարկված ե, բայց քո-
ղարկը, վորի տակ ծածկված ե նշանը, պարզ յե-
րեւմ ե, այն դեպքում (անտառի կամ թփերի
ծայրը, թեթև պատճեցը, փխրուն լիցքը կամ
ջրանցք և այլն) իբրև նշանակետեր կամ դիմ ըստ
բարձրության կարող ե ծառայել այդ քողարկը:

93. Յեթե նշանը հրացանաձիգներին չի յե-
րեւմ կամ անորոշ ե յերեւմ և նրա ճակատը
վորոշող պարզ բնագիծ նույնպես չկա, այն ժա-
մանակ նշանառության համար ստիպված են լի-
նում նշանակել մի այնպիսի ուրիշ կետ կամ
գիծ, վորն այդ նշանի հետ ընկնում ե միևնույն
ուղղության վրա, բայց նշանից բարձր (հեռու)-
կամ ցածր (մոտիկ) և մոտավորապես զուգահե-
ռական ե նշանի ճակատին: Այս դեպքում պետք
ե նշանոցը փոխել (բարձրացնել կամ ցածրա-
ցընել) այնպես վոր նշանն ընկնի: միջուկի մեջ:
Պահանջվող ուղղումները փոքր ինչ հմտություն
ունենալու դեպքում, հեշտությամբ կարելի յե-
փորոշել աչքով և ապա ճշտել սովորական փորձ-
նական կրակի միջոցով: Հրածդության այս ձե-
կը կոչվում ե հրաձգություն արհեստական նշա-
նակետով:

94. Կողքի ուղղությամբ նշանակետը պետք
պարտավոր ե ցույց տալ միայն, ոչ նեղ նշան-

ների վրա կրակելիս, յերբ նրանք իրանց ճակատով մեծ չեն գնդակների ցըման միջուկի լայնությունից, բ) յերբ անհրաժեշտ ե կենտրոնացընել կրակը մի կետում կամ լայն նշանի վորևե մասում (ուղմավարական նկատառությունից) և գ) փորձնական կրակի ժամանակ։ Մնացած դեպքերում հրացանաձգի ինքնուրույն նշանակետի ընտրությունն ավելի ձեռնտու յե, յեթե կրակը համահավասար բաժանված ե նշանի ամբողջ ճակատի վրա։ Այդ պատճառով յուրաքանչյուր հրացանաձգի թույլ ե տրվում նշանակետ ընտրել իր դիմաց, այն տեղին համապատասխան, վորը գրավում ե հրացանաձիգը կրակի գծում (այդպիսի ընտրության պետք ե սովորեն բոլոր հրացանաձիգները):

95. Պետք պետք ե ձգտի, վոր ցըման միջուկային շերտի լայնությունն ընկնի նշանի ճակատի ուղղությամբ։ Ուստի յեթե պետն իր վրա յե վերցնում նշանակետի նշանակելը, պարտավոր ե աչքի առաջ ունենալ նաև գնդակների սպասվելիք կողքի խոսորությունը, վոր կախված են մի շարք արտաքին հանգամանքներից։ իսկ հետո ուղղել իր նախկին ցուցումները փորձնական կրակի կամ դիտողության հետեանքների համեմատ։ Յերբ հրացանաձիգներն ինքնուրույն կերպով ընտրել են նշանակետեր, նա պետք ե որանց ոգնի, վոր գնդակները ձիշտ ուղղությամբ

արձակեն, ցույց տալով թե ինչ կողքի խոտո-
ռում ե սպասվում և դեպի վոր կողմը (տես
65-րդ հոդվածի աղյուսակը):

Կրակի տեսակի ընտրությունը.

96. Խմբական կրակը լինում է մենազարկ
և համազարկ:

97. Մենազարկ կոչվում է այն կրակը, յերբ
հրացանաձիգն ինքնուրույն կերպով ընտրում է
ամեն մի դնդակ արձակելու ժամանակը. դրանով
վորոշվում է մենազարկի դրական և բացասա-
կան հատկությունները: Մենազարկի դրական
հատկությունն այն է, վոր հրացանաձիգը կրա-
կում է տեղին ու ժամանակին, լավ նշան ըլո-
նելուց հետո: Այդպիսի կրակը հեշտությամբ վեր
է ածվում անկանոն և թշնամու, համար անվասա
կրակի, վորը յերբեմն պետք չի կարողանում
դադարեցնել. այդ կազմում է մենազարկի բա-
ցասական կողմը: Բայց և այնպես այս կրակի
տեսակը միակ նպատակահարմարն է բոլոր դեպ-
քերում, յերբ անհրաժեշտ է արագորեն հասնել
լուրջ մարտական հետևանքների: Մենազարկ
կրակի բացասական հատկություններից խուսա-
փելու համար, պետք պարտավոր է ժամանակ
առ ժամանակ դադարեցնել կրակը, հանդարառու-
թյունն և կարգը վերականգնելու համար, տա-
անհրաժեշտ կարգադրություններ, հաշվել փամ-

փուշտների քանակը և այլն։ Նա կարող է հրամայել հրացանաձիգներին կրակ բանալ հերթով, նշանակելով յուրաքանչյուրին վորոշ թվով փամփուշտ, վորը բանեցնելուց հետո, նա պետք է դադարեցնի կրակը. վերջապես հրաձգությունը կարող է հանձնարարել մի քանի հմուտ հրացանաձիգների։ Սակայն պետք է հիշել, վոր ամեն մի արհեստական սահմանափակումը կաշկանդում է հրացանաձիգների ինքնուրույնությունը, խանգարում է նրանց հակազդել հրաձգության պայմանների փոփոխությունների վրա և թուլացնում է կրակի գործոնությունը։ Ուստի այդ ձեերին դիմելը նպաստակահարմար է միայն սպասողական բովեներին և հրամարտի շրջաններում, յերբ հարկավոր է դանդաղորեն վոչնչացնել թշնամու նյութական և հոգեկան կենդանի ուժը, խնայել փամփուշտները և կարիք յեղած դեպքում, վերականգնել և սկահպանել կրակի կարգապահությունը։

98. Համազարկ կրակն ամբողջովին գտնվում է պետի ձեռքում. սրտ մեջ է նրա առավելությունը։ Բացի դրանից հանկարծակի արձակած համազարկը յերբեմն ուժեղ կերպով ազդում է թշնամու հոգեբանության վրա և նպաստում է իր գորքի մեջ զարթեցնելու կարգ ու կանոնի և հզորության դիտակցությունը։ Բայց համազարկ կրակի կուտակումը մեծ չե և հրամարտում։ Հա-

մազարկի դեկափարելն այնքան հեշտ և տեղին
չե: Ուստի համազարկին դիմել կարելի յե մի-
այն ա) փորձնական կրակի ժամանակ, բ) դի-
շերը թշնամու գրոհը յետ շպրտելու ժամանակ և
գ) յերը կարիք է լինում վերականգնել կամ
ոլահպանել կրակի կարգապահությունը:

Կրակի տեղափոխությունը, դադարեցնելը յեվ
ընդհանումը.

99. Կրակի տեղափոխելը, դադարեցնելը և
ընդհանությունը կատարվում է պետի, հաճախ նաև
հրացանաձիգների նախաձեռնությամբ (տես մե-
նազարկ հրաձգության կանոնները) գլխավորա-
պես ռազմավարական նկատառումներով:

100. Նշանները չպետք է փոխել առանց
հիմք ունենալու: Կրակի հաճախակի տեղափո-
խությունները դրական հետեանքներ չեն տալիս
և թուլացնում են զորամասի հավատն իր կրա-
կի ուժի վերաբերմամբ:

101. Կրակի ընդհատումներն անհրաժեշտ
են հրաձգային նոր կարգադրություններ տալու,
փամփուշտները խնայելու և հրացանաձիգներին
հանգիստ տալու համար: Այդ ընդհատումները
ծառայում են իբրև լավ միջոց կրակի կարգը և
դիպուկությունը վերականգնելու համար:

102. Ընդհատումների ժամանակ, յերը դա-
դարեցվում է կրակը, յեթե շարժում չի ապաս-

վում, պետք պարտավոր ե միջոցներ ձեռք առ-
նել՝ հրացանածիղներին թաքցնելով զուր կորուստ-
ներից ազատելու համար։ Դաշտը դիտելու հա-
մար կարելի յե թողնել միայն հերթափահ դի-
տողներ։

Դիշերային հրաճգություն.

103. Դիշերը հարձակման ժամանակ անհրա-
ժեշտ ե կատեգորիկ կերպով արգելել հրաճգու-
թյունը։ Դա վոչ միայն դրական հետևանքի չի
հասցնի, այլ ընդհակառակը վնասակար ե, վո-
րովինեակ թշնամուն զգուշացնում ե և հնարավո-
րություն ե տալիս դիմադրության միջոցներ
ձեռք առնել։

104. Ամրացրած դիրքերի պաշտպանության
ժամանակ մարտում դիշերային հրացանային
կամ գնդացրային կրակը մոտիկ մատուցների
վրա կարող ե ծառայել իբրև իրական միակ մի-
ջոցը թշնամու զրոհը յետ շպրտելու. սակայն
այդ պահանջում ե առաջուց նախապատրաստու-
թյուն (տես հոդված 48, 52)։ Նախապատրաս-
տության միջոցներից մեկն ե նաև հուսալի նա-
խազգուշացնող ազդանշաններ կազմոկերպելը,
վորը հնարավորություն ե տալիս պետին իր
ժամանակին կրակ բանալ։

Փամփուշտների լրացումը մաշտում։


105. Փամփուշտների լրացման հոգու պետք
ե քաշել մարտն սկսվելուց առաջ։ Նախքան մար-

տական կարդ ընդունելը պետք է փամփշտակիր-
ներին ուղարկել յերկանիվների մոտ (1—2 հոգի
ամեն դասակից), լրացնել փամփշտակիրների
միջոցով հրացանաձիգների պաշարը մինչև սահ-
մանված քանակը և դատարկ յերկանիվներն ու-
ղարկել թիկունք փամփուշտներ ստանալու հա-
մար։ Մարտի պարագաներին նայած՝ ոգտակար
է յերբեմն տալ հրացանաձիգներին նորմայից ա-
վելի 2—3 տուփ փամփուշտ, վոր նրանք պաշտ-
պանվելու ժամանակ կարող են պահել իրանց
կողքին իսկ հարձակման ժամանակ—դնել դրպան-
ները կամ իրերի տոսկը ակները։

106. Մարտագծին փամփուշտներ հասցնելը
կատարվում է թիկունքում՝ յերկանիվներով,
սայլակներով և բեռնակիր անասուններով. ավելի
մոտիկ հեռավորության վրա՝ ձեռքի սայլակ-
ներով, և վերջապես ամենամոտ մարտական գո-
տիում՝ միայն ձեռքից ձեռք տալով, հատուկ
փամփուշտների կայանների միջոցով։

107. Հաճախ մարտի դժվարին. պարագան
ստիպում է առաջավոր գծերի հրացանաձիգնե-
րին բանեցրած փամփուշտների պաշարը լրա-
ցընելու համար սպասել մինչև մութն ընկնելը։

ԲԱՐԱՁՈՒՑ



Ականանետ—Миномет

Ակոսներ—Нарезы

Անդրադարձում—Рикошетирование

Անտառի ծայր—Опушка леса

Արձակյուն—Выстрел

Արշալ—Галоп

Բռնամարտ—Рукопашный бой

Գետին—Грунт

Գլխաչափ նշան—Головная цель

Գնդակների ցրում—Рассеивание пуль

Գնդակների խոտորում—Отклонение пуль

Գնդակների ցրման միջուկ—Сердцевина рассеивания пуль

Գնդակների ղիպչելու հավանականություն--Вероятность попадания пуль

Գնդակոծել—Обстреливать

Գործնական ուղղմագրություն—Прикладная тактика

Գոտկաչափ նշան—Поясная цель

Գումարկ—Обоз

Դանդաղ կրակ—Редкий огонь

Դասակի նեցուկ—Взводная поддержка

Դիպուկ կրակ—Меткий огонь

Դիպուկություն—Меткость

Դիպչելու միջին կետ—Средняя точка попадания

Դիպչելու միջին կետերի զիծ—Линия средних точек попадания

Դիտակետ—Наблюдательный пункт

Յերկանիվ փամփուշտի—Патронная двуколка

Զորաշարժեր—Маневры

Զրահապատ—Броневик

Թելային կրակ—Фланговый огонь

Իրերի տոպրակ—Вещевой мешок

Լուսարձակ—Прожектор

Խեչակներ—Рогульки

Խմբական կրակ—Групповой огонь

Խոշնդութ—препятствие

Խոտորում—Отклонение

Ծածկարան—Закрытие

Կողմորոշ կետեր—Ориентировочные точки

Կողքի ուղղությամբ—По боковому направлению

- Կրակային խնդիրներ—Огневые задачи
 Կրակի տեսակը—Род огня
 Կրակի ձևի—Вид огня
 Կրակի գործոնությունը—Действительность огня
 Կրանը—Подвижной парк
 Կրծքաչափ նշան—Грудная цель
 Կուտակված հրածգություն—Кучная стрельба
-

- Հակազարկ—Контр удар
 Հակընդդեմ քամի—Встречный ветер
 Հասակաչափ նշան—Цель в рост
 Հատիկ—Мушка
 Հարծակողական թափ—Наступательный порыв
 Հաճախակի կրակ—Частый огонь
 Համազարկ կրակ—Залповый огонь
 Հարվածելի տարածություն—Поражаемое про-
 странство
 Հարվածելիյություն—Уязвимость
 Հենարան (հրացանի համար)—Упор
 Հետազիծ—Траектория
 Հողակույթ—Насыпь
 Հորիզոնական մակերեսություն—Горизонтальная
 поверхность
 Հրահան—Курок
 Հրամարու—Огневой бой
 Հրածգության տեսական հիմուններ—Теорити-
 ческие основы стрельбы
 Հրացանի վոլորում—Сваивание винтовки
 Հրացանակալ—Станок винтовки
 Հրացանի խփելը—Бой винтовки
 Հրթիռ—Ракета

Չեռքի նոնակներ—Ручные гранаты

Չզան—Крючок

Մատուց—Подступ

Մարտադաշտի դիտելը—Наблюдение за полем
боя

Մարտական գոտի—Боевая зона

Մարտական գծեր—Боевые линии

Մարտական պարտականություններ—Боевые
обязанности

Մարտի պարագաներ—Боевая обстановка

Մարտկոց—Батарея

Մեծ հատիկ (վերցնելը)—Крупная мушка

Մենազարկ հրաձգություն—Одиночная стрельба

Մշտական նշանոց—Постоянный прицел

Նշանագիծ—Линия прицеливания

Նշանակետ—Точка прицеливания

Նշանոց—Прицел

Նշանոցի շրջանակ—При цельная рамка

Նշանոցի դիտոց—Прорез прицела

Նեցուկ—Поддержка

Նշանադիր—Наводчик

Նշանել—целиться

Նոնակնետ—гранатомёт

Նոնակնետիկ—гранатометчик

Շարժական նշաններ—Подвижные цели

Շեղ կրակ—Косой огонь

Շեղում—Деривация

Ուղակից մասի—Резервная часть

Ուղեկից բամի—Попутный ветер

Ուղակայաց մակերեւոյթ—Вертикальная поверхность

Ուղիղ արձակուն—Прямой выстрел

Պատկերներ—Фигуры

Պատնեշ—Преграда

Զարդվածք—Забойка

Թագմավարության պարագ—Тактическая установка

Սալանակ—Аэроплан

Սարքին զրություն զենքի—Исправное состояние оружия

Սրազեն—Холодное оружие

Սրարշավ—Карьер

Սփռված կրակ—Настильный огонь

Ստոգման սեղան—Поверочная скамья

Տեղեկանք—Справка

Տուփ—Пачка

Յրման մակարդակ—Площадь рассеивания

Յրման միջուկային շերտ—Сердцевинная полоса рассеивания

Յրում—Рассеивание

Փամփուշտակալ—Патронташ

Փամփուշտակիր—Подносчик патронов

Փամփուշտների կայան—Патронный пост

Փորձնական հրածգության նշանը նանկի մեջ
զցելով—Пристрелка захватом цели в вилку



Փորձնական հրածգություն—Пристрелка

Փորձնական հրածգություն փառյուններով—
Пристрелка с приближением к цели скачками


Փոքրիկ նատիկ վերցնելը—Мелкая мушка

Քողարկ—Маска

Քողարկվել—Маскироваться



لله ولد سید علی بن ابی طالب
و مولانا مصطفیٰ
و مولانا مصطفیٰ




ԲՈՅ ՏԵ Վ ՋԱՆԴԻՔ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039089

(154)



ԳԻՒՆ Ե 35 ԿՈՊ.
